

796

---


J-30



Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ 25 OCT 2010

Դանկալան

Խաղեր



96  
- 30

ՄԵՏՆԱՍ

Զ.

82



36-4  
Նախ 49

ՀՈՒՎԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՆ № 4

796

4-30

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ԽՈՒՎԱԿՈՏԵԿ  
ԻՆՏԻՏՄԿԱ  
ԻՍՏՈՐՈՎԵԴՆԻԿ  
Գիտությունների  
Ազգային Ակադեմիայի  
ՀԵՏՐ



23-02-02

ՊԵՏՂԱՍ

1935

ՅԵՐԵՎԱՆ

9452  
ՀԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հեղինակ՝ Վ. Վարդանյան  
Պատ. խմբագիր՝ Ս. Սարգսյան  
Տեխ. խմբագիր՝ Ս. Բասարյան  
Լեզվական խմբագիր՝ Հ. Հայրապետյան  
Մրբագրիչներ՝ Ս. Փառազանյան, Մ. Բեչյան

# Յ Ե Ր Կ ՈՒ Խ Ո Ս Ք

## Նկարները եղիկ Իսաբելյանի

Հաստատված է ՀՀԿՑԵՄ Կենտրոնի, Ֆիզ-  
կուլտ Գերագույն Խորհրդի և հանրա-  
քննարկական կարիքների կողմից:



59479.66

Գլխավոր Վ. 285, Հրատ. 3472 Պատ. 1176, Տիրած 3000,  
Հանձնված է արտադրություն 16 հոկտ. 1935  
Մտորագրված է տպագրելու 26 հոկտ. 1935

Մեզ մոտ, Հայաստանում յե՛վ Անդրկովկա-  
սում, մինչե՛վ այժմ լույս տեսած գրականու-  
թյան մեջ չենք հանդիպել մի այնպիսի խա-  
ղերի ձեռնարկի, վորը հասկապես գրված լինե-  
ր 5—11 տարեկան յերեխաների համար:

Այն խոռո կարիքը, վոր գգում են մեր հա-  
խաղարոցական դեկավարներն ու հոկտեմբերի-  
կավարները, գլխավորապես ամառային ամիս-  
ներին, այս գրքի հրատարակման պատճառը հան-  
դիսացան:

Այս աշխատանքը բավականին դժվարին  
եր: Նախ՝ ոռուսական յե՛վ մյուս ազգերի գրա-  
կանության մեջ գոյություն ունեցող հաս ու  
կենց մանկական խաղերը չեյին բավարարում  
յեր յերեխաների պահանջին յե՛վ յերկրորդ՝ մենք  
պե՛տ է կազմեյինք մի այնպիսի ձեռնարկ, վորը  
վոչ միայն դեկավարի համար նիքս ուղեցույց  
հանդիսանար սարբե սարիֆի յերեխաների հա-

մար խաղեր ընտրելու գործն ուսումնասիրելիս, այլե՞վ խաղերն իրենց ժիզկուլյուսուրային յե՞վ դասփարակչական կազմուքյամբ բնորոշ լինելին յե՞վ նպաստելին յերեխաների բնախոսական անմանը:

Թե վորքան է ինձ հաջողվել նպասակիս հասնել, այդ ցույց կտա այն անաչառ քննադասությունը, վորին յես սպասում եմ մեր ծնողների, խաղի դասասունների, նախադպրոցական դեկավարների յե՞վ հոկվարների ու կոլվարների կողմից:

Իմ գլխավոր նպատակն է յեղել մեր յերջանիկ մասաղ սերնդին սալ այնպիսի խաղեր, վորոնք առողջացնեն, դասփարակեն, ժպիտ ու խնդություն սան նրանց՝ բնակարանում, հրապարակում, համբարում յե՞վ այլուր, վորտեղ նրանք հավանվելու յե՞վ իրենց ազատ ժամերը կազմակերպելու առիթ կունենան:

Յես պարտավոր եմ շնորհակալությունս հայտնել տղայիս, հոկտեմբերիկ Կառլենին, վորը վոչ միայն իր գիտցած խաղերը սովորեցրեց ինձ, այլ յե՞վ որեր շարունակ իր ազատ ժամերին գալնազան դպրոցների յերեխաների մոտ գնալով, նրանց հետ խաղալով, մեծ քվով խաղեր հավաքեց, առանձնապես 5—7 տարեկանների համար:

Յանկությունս է, վոր այս գիրքը լավագույն

պրոպագանդիսը հանդիսանա բոլոր ծնողների համար՝ վորպեսզի նրանք զբաղվեն յերեխաների խաղի յե՞վ խելացի ժամանցի կազմակերպման գործով:

ՖԻԶԿՈՒԼՏ-ՄԵԹՈԴՍԿԱՆ ԱՇԽԱՏՈՂ  
ՅԵՎ ԽԱՂԵՐԻ ԳՍԱՍՏՈՒՐ  
ՎԱՐԳԱՆ ՎԱՐԳԱՆՅԱՆ

## ԽԱՂԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Պաղերի ուսուցումն ավելի հաջող կազմակերպելու և յերեխաների հոգեկան ու ֆիզիկական ունակությունները համաշարժորեն զարգացնելու գործում վճռական նշանակություն ունի դասատվի և կոլվարի պատրաստականությունը և խաղերի ուսուցման մեթոդիկային լավ տիրապետելու անհրաժեշտությունը:

15 տարվա ընթացքում յես հանդիպել եմ բազմաթիվ կոլվարների, դասատուների և ֆիզկուլտ-հրահանգիչների, վորոնք ամենագեղեցիկ և յերեխաների կողմից սիրված խաղերը, ավանդման մեջնցին այլանդակել և անհետաքրքրական են դարձրել:

Պաղերի դասատուն պետք է գիտենա, թե յերեխայի զարգացման տարբեր ժամանակաշրջանում, նրա հետ ինչ կերպ պիտի վերաբերվել, ինչ մոտեցում ունենալ

անհատ յերեխային, կուեկտիվին: Մի խոսքով, նա պետք է լինի և՛ ուղեցույց, և՛ հոգեբան, և՛ յերեխաների լավագույն ընկերը:

Նախքան խաղն ուսուցանելն անհրաժեշտ է ուշադրութեամբ ընթերցել խաղը: Յեթե խաղի վորևե որե՛նքը կամ դաշտի չափան անհասկանալի յե, պետք է գծագրել թղթի վրա խաղահրապարակը, դասավորել խաղացողներին, ուշադրութեամբ պատկերացնել ամբողջ խաղը և պատրաստել խաղի համար անհրաժեշտ պարագաները:

Փիզկուլտ խաղերի համար պետք է պատրաստել շենք կամ հրապարակ և պահանջվող անհրաժեշտ սարքավորում—գրնդակ, ցանց, բուլավաներ, կավիճ և այլն:

Սաղն սկսելուց առաջ պետք է բացել լուսամուտը և ստուգել դահլիճի մաքրությունը:

Սաղալու ժամանակ խոսել վոչ թե առանձին յերեխաների, այլ բոլոր խաղացողների հետ: Այդ ժամանակ պետք է այնպես կանգնել, վոր թե դասատուն տեսնի բոլորին, և թե խաղացողները՝ դասատվին:

Սաղի ժամանակ պետք է այնպիսի պայմաններ ստեղծել, վոր յերեխաները հայտնաբերեն իրենց ինքնագործունեյու-

թյունը: Դասատվի միջամտությունը և նկատողությունը պետք է ավելի հետաքրքրություն և սեր առաջ բերի դեպի խաղը:

Սաղերի ընթացքում այս կամ այն յերեխայի կամ խմբի նկատմամբ աչառու չպետք է լինել:

Փիզկուլտուրային խաղերն ավանդելիս անհրաժեշտ է սուլիչ ունենալ: Յեթե դեկավարությունը հանձնարարված է յերեխաներից վորևե մեկին, նրա աշխատանքներին չպետք է միջամտել:

Սաղը չպետք է ձգձգել այնչափ, վոր յերեխաները սկսեն ձանձրանալ ու ցրվել: Պետք է աշխատել ժամանակին ավարտել խաղը, առաջարկելով նրա փոխարեն նորը, կամ խաղաժամը վերջացնել:

Յերբ դասատուն նկատում է, վոր յերեխաների մի մասը, կամ շատերը, թուլանում են, սկսում են խաղը կատակի վերածել, դժվարանում են վագել, և վերջապես յերբ մի շարք յերեխաների վրա գունատվելու նշաններ են յերևում, պետք է անմիջապես խաղը վերջացնել և նրա փոխարեն կազմակերպել նստած, հանգիստ յերգախաղեր:

Զպետք է ուժեղ վազքախաղից հետո  
յերեխաներին նստեցնել կամ ցրել:

Անհրաժեշտ է վազքախաղերից հետո  
յերեխաների սրտի գործունեյությունն  
աստիճանաբար հանգստացնել թեթև ֆիզ-  
կուլտ շնչառական շարժումով և նստած  
խաղերով:

Սաղերից հետո պետք է սովորեցնել  
յերեխաներին կարգի բերել շենքը, հրա-  
պարակը հավաքելով և տեղավորելով խաղի  
պարագաները:

## ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱ- ԲԵՐՎՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՑՈՒՑ- ՄՈՒՆՔՆԵՐ

Իբրև որենք, ֆիզկուլտ խաղերը պետք է  
կազմակերպել բացօթյա—հրապարակում,  
բակում, ստադիոնում և այլն:

Այն վեպքերում, յերբ կլիմայական,  
կամ այլ պատճառներով (սառնամանիք  
10—20 աստիճանի, անձրև, քամի, շոգ)  
հնարավոր չե դրսում կազմակերպել, կա-  
րելի յե կազմակերպել շենքում:

Շենքը պետք է լինի ընդարձակ, մա-  
քուր և լուսավոր:

Շենքի նորմալ շերտությունը պետք  
է լինի 12—15 աստիճան (Յելսիուսով):  
Գարնան և աշնանը խաղերը կարելի յե  
անցկացնել շենքում, սակայն պետք է ող-  
անցքները բաց լինեն և հատակը՝ տախ-  
տակէ:

Փոշուց խուսափելու նպատակով, խա-  
ղերից առաջ հատակը պետք է մաքրել խո-  
նավ շորով, կամ թաց ավելով:

Ֆիզկուլտ խաղերը նպատակահարմար  
է կազմակերպել մինչև կերակուր ընդու-  
նելը, կամ ուտելուց 1 ու կես ժամ հետո:  
Յեթե կուլեկտիվային կամ փնջիկային հա-  
վաքույթը կայանում է անմիջապես դրպ-  
րոցական պարապմունքներից հետո, նպա-  
տակահարմար է նախ ֆիզկուլտ խաղեր  
անցկացնել, ապա պարապմունք:

Հանգստի օրերին շեշտը կարելի յե դնել  
ավելի հանգիստ ու զվարճալի խաղերի վրա,  
վորոնք մտավոր խոշոր լարվածություն  
չեն պահանջում:

Նախադպրոցական և հոկտեմբերիկա-  
կան աշխատանքների վորոշ պայմաններից  
յելնելով, միշտ չի հաջողվում պահանջել  
յերեխաներից, վոր խաղերի համար հա-  
տուկ ֆիզկուլտուրային հագուստ ունենան

(տրուսիկներ, մայկաներ, տղաների համար բլուզկաներ, կամ թե՛վա՛վոր մայկաներ ու տրուսիկներ աղջիկների համար): Իրա հետևանքով ել խաղերը հաճախ անց են կացվում այն հագուստով, վորով յերեխաները յեկել են մանկապարտեզ կամ կոլեկտիվային պարապմունքի:

Մեր մանկապարտեզի ղեկավարները և հոկվարները պիտի աշխատեն ամեն կերպ ապահովել յերեխաներին ֆիզկուլտ հագուստով:

Յեթե ֆիզկուլտուրային հագուստներ չկան, պետք է թուլացնել ոճիքը և գոտին, վորպեսզի արյան շրջանառությունն անարգել կատարվի: Պետք է խուսափել յերեխաներին վոտաբորելի խաղացներուց: Անհրաժեշտ է խաղերի համար ունենալ հատուկ շուստեր:

Չմեռը կամ ցուրտ յեղանակներին, խաղերը կազմակերպվում են նույն կոշիկներով, վորով յեկել են մանկապարտեզ: Սաղերի ժամանակ պետք է հանել վերարկուն, և գլխավորապես այդպիսի յեղանակներին պիտի տալ ավելի շարան վազքով խաղեր, յերեխաներին տաքացնելու և կազդուրելու նպատակով:

Բացոթյա խաղերի ժամանակ շատ ծանր հագուստ չպետք է հագնել: Գերադասելի յե բրդե տաք ֆայկաներ, վորոնք ազատ շարժումներ կատարելու համար հարմար են:

Յեթե յերեխան խաղալիս քրտնել է, պետք է գնա դասարան, կամ վերարկուն հագնի:

Սաղերի ժամանակ յերեխաները հաճախ ծարավ են զգում, և ծարավը հագեցնում են ձյուն, սառուց կամ սառը ջուր խմելով:

Այդպիսի դեպքերի վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել, պետք է հսկել, վոր յերեխաները համբերեն, կամ գոլ ջուր խմեն:

Չմեռը խաղերի ժամանակ պետք է գլխարկը ծածկել: Վնասակար և վտանգավոր է, յերբ յերեխաները խաղի յեն դուրս գալիս գլխաբաց:

## ՌԵՏԻՆԵ ՓՈՔԻ ԳՆԴԱԿԻ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յերեխաների, մասնավորապես 6—10 տարեկան փոքրահասակների համար, չկա

ավելի սիրելի և ուրախ խաղ, քան սեփական փոքր գնդակի խաղը:

Այդ խաղի միջոցով յերեխաները ձեռք են բերում բռնելու ունակութիւն, ձեռքի, աչքի շարժումներ, հավասարակշռութիւն, կողմնորոշում և, վոր ամենագլխավորն է, հարստացնում են իրենց մտորային բազմազան, վորն այնքան խոշոր դրական ազդեցութիւն է թողնում յերեխայի ֆիզիկականի և մտավորականի վրա:

Այս ուղղութիւնով ներքև հիշված անհատական և ընկերակցի գնդակախաղերը խոշոր չափով կողմնեն դասաստվին, վոր նա վոչ միայն նշված որինակներով զբաղեցնի յերեխաներին, այլև աշխատի նորանոր ձեւեր ու կոմբինացիաներ ստեղծել, գնդակախաղերի սերիան էլ ավելի հարստացնելու և հետաքրքրական դարձնելու իմաստով:

### Գ Ն Դ Ա Կ Գ Ց Ե Լ

(Անհատական խաղ)

1. Գնդակը նետել վեր և բռնել յերկու ձեռքով, ափերը վեր պահած:
2. Գնդակը նետել վեր և բռնել մի

ձեռքով (նախ աջով, ապա ձախով), ափեր վեր պահած:

3. Գնդակը խփել գետնին, բարձրանալիս բռնել մի ձեռքով (նախ աջով, ապա ձախով), ափեր վեր պահած:

4. Գնդակը խփել գետնին, բարձրանալիս բռնել մի ձեռքով (նախ աջով, հետո ձախով) ափեր ցած պահած:

5. Գնդակը խփել գետնին յերկու կամ մի քանի անգամ և բռնել մի ձեռքով (նախ աջով, հետո ձախով):

59479.66

### Զ Ո Ւ Յ Գ Ե Ր Ո Վ Խ Ա Ղ

Յեթե խաղացողները շատ են, կարելի չէ շարքերով կանգնեցնել իրար զիմաց 2—3 վտար հեռավորութիւնով, կամ գույքերով առանձնացնել: Յերկու դեպքում էլ պետք է հսկել, վոր գնդակախաղերը լինեն շատ կարճ տարածութիւն վրա:

Յերբ գնդակ զցելու մեջ արդեն վորոշ վարժութիւններ են ձեռք բերել, տարածութիւններն աստիճանաբար պետք է ավելացնել:

1. Գնդակը նետել դեպի խաղընկերը, վորը պետք է բռնի միջու ձեռքով:



2. Գնդակը նետել ղեպի խաղընկերը, վորը պետք է բռնի մի ձեռքով (աջ, ապա ձախ ձեռքով), ափերը վեր պահած:



3. Գնդակը նետել ղեպի խաղընկերը, վորը պետք է բռնի մի ձեռքով (աջ, ապա ձախ ձեռքով), ափերը ցած պահած:

4. Գնդակը նետել ղեպի խաղընկերը, վորն առանց բռնելու խփում, յետ է դարձնում, յեվ այսպես, առանց

բռնելու, գնդակն ողի մեջ մեկից մյուսին է թռչում անորոշ ժամանակով:

5. Գնդակը խփել գետնին և կանչել ընկերովը, վորը պիտի արագ վազի ու բռնի աջ, ապա ձախ, և վերջը յերկու ձեռքով (նախքան գետին ընկնելը):

Նույնը կատարում է մյուս ընկերը:

6. Գնդակները պցել մեկը մյուսին, միևնույն ժամանակ (աջ, ապա ձախ ձեռ-

քով) գնդակը բռնել յերկու ձեռքով, ափերը վեր պահած:

## ԳՆԴԱԿԸ ՎԵՐ ՈՒ ՎԱՐ ՆԵՏԵԼ

(Անհատական խաղ)

1. Գնդակը նետել վար և բռնել յերկու ձեռքով:

2. Գնդակը նետել վար և բռնել մի ձեռքով (նախ աջով, ապա ձախով), ափերը վեր պահած:

3. Գնդակը նետել վար, բարձրանալիս խփել ողի մեջ առանց բռնելու (նախ աջով, ապա ձախով), ձեռքի ափը վեր պահած:

4. Գնդակը խփել գետնին, բարձրանալիս յերկու անգամ ծափ տալ, հետո բռնել յերկու ձեռքով, ափերը վեր պահած:

5. Գնդակը խփել գետնին, բարձրանալիս մի քանի անգամ ծափ տալ, հետո բռնել (նախ աջով, ապա ձախով):

6. Գնդակը խփել գետնին, բարձրանալիս ծափ տալ, նախ առաջ, ապա գլխից վերև, հետո բռնել գնդակը յերկու ձեռքով, ափերը վեր պահած:

7. Գնդակը նետել ողուժ, նախքան յերկու ձեռքով բռնելը մի քանի անգամ ծափ տալ:

8. Գնդակը նետել ողուժ, պատվել, ապա բռնել յերկու կամ մեկ ձեռքով, ափերը վեր կամ վար պահած:

9. Գնդակը նետել ողուժ, նախքան բռնելը պզգել, ձեռք տալ գետնին, վեր կենալ:

10. Գնդակը նետել ողուժ, մի անգամ ծափ տալ, պզգել, ձեռք տալ գետնին, ապա վեր կենալ ու բռնել գնդակը, նախքան գետին ընկնելը:

## ԶՈՒՅԳԵՐՈՎ ԽԱՂ

1. Գնդակը նետել գետնին, վոր ընկերը բռնի նախքան գետին ընկնելը:

2. Գնդակը խփել գետնին, վոր ընկերը բռնի մի անգամ ծափ տալուց հետո:

3. Գնդակը խփել գետնին, վոր ընկերը բռնի մի անգամ պտույտ կատարելուց հետո:

4. Գնդակը զցել ողուժ, վոր ընկերը բռնի յերկու անգամ ծափ տալուց հետո:

5. Գնդակը նետել ողուժ, վոր ընկերը բռնի մի լողունգ ասելուց հետո:

6. Գնդակը նետել ողուժ, վոր ընկերը վեր թռչելով բռնի:

7. Գնդակը նետել ողուժ, վոր ընկերը բռնի մի անգամ գետնին ընկնելուց հետո (նախ աջ, ապա ձախ ձեռքով), ափերը վեր կամ ցած պահած:

## ԳՆԴԱԿԸ ԽՓԵԼ ՊԱՏԻՆ

(Ա.Ահասական խաղ)

1. Գնդակը խփել պատին, թողնել, վոր ընկնի գետին, բարձրանալիս բռնել յերկու ձեռքով:

2. Գնդակը խփել պատին, թողնել, վոր ընկնի գետին, բարձրանալիս բռնել մի ձեռքով (նախ աջով, ապա ձախով), ափը վեր պահած:

3. Գնդակը խփել պատին, թողնել, վոր ընկնի գետին յերկու անգամ, ապա բռնել յերկու ձեռքով, ափերը վեր պահած:

4. Գնդակը խփել պատին և բռնել մի ձեռքով, առանց թողնելու, վոր գետին ընկնի:

5. Գնդակը խփել պատին և մի անգամ ծափ տալուց հետո բռնել:

## ԶՈՒՅԳԵՐՈՎ ԽԱՂ

1. Գնդակը խփել պատին և կանչել ընկերոջը, վոր բռնի յերկու ձեռքով:
2. Գնդակը խփել պատին, վոր ընկերը բռնի մի անգամ զեանին ընկնելուց հետո:
3. Գնդակը խփել պատին, վոր ընկերը մի քաղաքի անուն ասելով, բռնի մի ձեռքով (նախ աջով, ապա ձախով):
4. Գնդակը խփել պատին, վոր ընկերը մի թուշունի անուն տալուց և մի անգամ ծափ տալուց հետո բռնի, մի անգամ զեանին կպչելուց հետո:

### 1. 5—11 ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

#### 1. ՓԻՍԻԿԸ ՅԵՎ ՄԿՆԵՐԸ


Խաղացողներ՝ 10—30 հոգի:

Խաղավայր՝ դառ, հրապարակ:

Գեանի վրա գծում են մի մեծ շրջան: Խաղացողներին մեկն ընտրվում է վորպես փխիկ, վորը կանգնում է շրջանի մեջ:

Մկները, «Խաղն սկսվում է» ազդանշանից հետո, սկսում են բարկացնել փխիկին մոտենալով շրջանին, կամ վազելով, անցնելով շրջանի վրայից:

Փխիկն աշխատում է, առանց շրջագծից դուրս գալու, խփել շրջագծին մոտեցողներին և նրա վրայից անցնողներին:



Խփվողները դառնում են փխիկ, մըստում շրջագծի մեջ և փխիկի հետ միասին շարունակում խաղը:

Խաղը վերջացած է համարվում, յերբ մկները, բացի մեկից, խփվում են և դառնում փխիկներ:

Այս խաղը զարգացնում է յերեխայի վստահությունը, արագաշարժությունը և ձարպիկությունը:

## 2. ՃՈՒՏԻԿՆԵՐ

Խաղացողներ՝ 10—20 հոգի:

Խաղավայր՝ դասարան, հրապարակ:

Ղեկավարը հավաքում է յերեխաներին մի մեծ սեղանի շուրջը և բաժանում յերկու խմբի:

Խաղացողները շարվում են սեղանի շուրջն այնպես, ինչպես իրենք են ցանկանում, միայն պետք է խմանան, թե վոր խմբին են պատկանում:

Յերբ խմբերը բաժանված են և խաղը լրիվ բացատրված, ղեկավարը մեկ կամ յերկու բուռ լոբի կամ սիսեռ է շաղ տալիս սեղանի վրա:

Խաղացողներն սկսում են աչազ-աչազ հավաքել:

Պետք է հսկել, վոր լոբիները կամ սիսեռները հավաքվեն մեկիկ-մեկիկ:

Յերբ բոլոր լոբիները մեկ-մեկ հավաքված են, յուրաքանչյուր խմբի խաղացող իր հավաքած լոբիները տալիս է իր խմբակավարին:

Խմբակավարները, յերեխաների ներկայությամբ, սկսում են հաշվել լոբիները:

ըր. այսպես, խմբակավարներից մեկը մի լոբի դնում է սեղանի վրա, հետո մյուսն է դնում: Յեվ այսպես հերթականորեն մեկ-մեկ լոբի դնում են սեղանի վրա:

Վոր կողմի խմբակավարի մոտ լոբիներ շատ լինեն, այն կողմի խումբն էլ խաղը շահում է:

Յեթե խաղացողները 7 տարեկանից բարձր են, պետք է թույլատրել, վոր իրենք հաշվեն իրենց հավաքած լոբիները, վորից հետո խաղի ղեկավարը, վորոշում է և հայտնում, թե վոր խումբն է շահել:

Այս խաղը զարգացնում է յերեխաների ճարտիկությունը, արագաշարժությունը և հաշվելու ունակությունը:

## 3. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԿԱՄՈՒՐՁՆԵՐ

Խաղացողներ՝ 10—30 հոգի:

Խաղավայր՝ դասարան, ակումբ, հրապարակ:

Հատակի վրա գծում են մի մետր յերկարությամբ և կես մետր լայնությամբ 4 քառակուսի, կամ, դրանց փոխարեն, 4 թերթ են դնում հատակին:

Խաղացողները սենյակի մի անկյու-

նում շարվում են իրար յետևից ծոծրակի ուղղությամբ:

Իաշնակահարն սկսում է մարշ նվագել, աշխատելով նվագի ընթացքում տեմպը հաճախակի փոխել և հանկարծ նվագը դադարեցնել:

Սաղացողները նվագի տեմպի համաձայն սկսում են քայլել քառակուսիների վրայով: Յերբ նվագը դադարում է, անմիջապես կանգ են առնում: Վոր խաղացողը կանգնած է լինում քառակուսիների մեջ, վորպես պատիժ, արտասանել, յերգել և զանազան կենդանիների ձայներ են հանել տալիս:

Յեթե խաղացողները մեծահասակներ են, քառակուսիների մեջ կանգնողներին կարելի չե խողից դուրս հանել, վորպեսզի կարելի լինի իմանալ, թե ով է շահում:

Այս խողը զարգացնում է լսելու, քայլելու ու ռիթմն ու շափը:

Իաշնամուր չլինելու դեպքում, կարելի չե յերգել, ծափ տալ կամ վորևե գործիք նվագել:

Սաղացողներ՝ 10—40 հոգի:

Սաղավալը՝ դաճ, այգի, հրապարակ:

Սաղացողները բաժանվում են յերկու հավասար խմբերի և կանգնում իրարից 10—25 քայլ հեռավորության վրա, նշանակված գծում, յերեսներն իրար դարձրած:

Յերբ հայտարարվում է «խաղն սկսված է», յերկու խմբերը շղթայված քայլում են իրար դիմաց:

Իսաստունն այս միջոցին աալիս է զանազան հրահանգներ. «Նստիր, վեր կաց, ձեռքերը վեր, անդում, քայլ, յեա դանձ» և այլն:

Այս հրահանգները յերկու շարքերն ել պարտավոր են ճշտությամբ կատարել:

Կով կլինի, վոր հրահանգները լինեն ծրիծաղաշարժ և պարզ:

Հրահանգների ընթացքում դասատուն գոչում է. «հոփ» կամ «հոփ-հոփ»: Վոր խմբի անունը ավեց, այն խմբի խաղացողներն անմիջապես սկսում են փախչել դեպի իրենց սահմանը, իսկ մյուսներն աշխատում են բռնել նրանց:

Բռնվողներն ավերանում են հակառակորդների վրա և նրանց հետն ել խաղում են, վորպես նույն խմբի խաղացողներ:

Մաղն այսպես շարունակվում է, մինչև մեկ խումբը բոլորովին բռնվի մյուս խմբի կողմից:

Մաղը հետաքրքրական է դառնում յերբ նախապես ասվում է «հոփ», և քիչ հետո հանկարծ «հոփ-հոփ»: Այս դեպքում փախչող «հոփ-հոփ»-ներն անմիջապես յետ են դառնում և հալածում «հոփ»-երին:

Նախքան խաղն սկսելը, պետք է վորտչել, թե վոր խումբն է «հոփ» և վորը՝ «հոփ-հոփ»:

Այս խաղը զարգացնում է յերեխայի ուշադրությունը և արագաշարժությունը:

## 5. ԳԻՇԵՐ-ՑԵՐԵԿ

Մաղացողներ՝ 10—20 հոգի:

Մաղավայր՝ դահլ, հրապարակ:

Այս խաղի համար դաշտը պետք է լինի հարթ, առանց քարերի և դար ու փոսերի:

Մաղն սկսելուց առաջ պետք է պատրաստել 10—15 սանտիմետր մակերես ու-

նեցող կարտոնից կամ ֆաներկայից մի շրջանակ:

Շրջանակի մի յերեսը պետք է լավ սեվացնել, վորպես գիշեր, իսկ մյուս կողմը պետք է թողնել սպիտակ, վորպես ցերեկ:

Դաշտի կենտրոնում, իրարից կես, կամ մեկ մետր հեռավորությամբ, քաշվում են յերկու գուգահեռ գծեր:

Այդ գծերից 10—20 մետր հեռավորության վրա քաշվում են ևս մեկական գուգահեռ գծեր, վորպես գիշեր և ցերեկ խաղացող խմբերի սահման:

Մաղացողները բաժանվում են յերկու հավասար մասերի և կանգնում կենտրոնի գուգահեռ գծերի վրա, յերեխաներն իրար դարձրած:

Դասատուն մի խմբին գիշեր անունն է տալիս, իսկ մյուսին՝ ցերեկ:

Նա վերցնում է շրջանակը զցում ուղում, յերկու խմբերի մեջ ընկած տարածության վրա:

Շրջանակը ղետին ընկնելիս, յեթե ցույց է տալիս սև կողմը, գիշերներն իսկույն փախչում են իրենց սահմանը, իսկ ցերեկները հետապնդում են նրանց: Քա-

նի հոգի բռնեցին, ավերացնում են իրենց  
թվի վրա և նորից շարունակում խաղը:

Նույնը՝ սպիտակների վերաբերյալ,  
յերբ շրջանակը գետին ընկնելիս սպիտակ  
կողմն է ցույց ապրիս:

Խաղի վերջում վոր կողմը քիչ թվով  
խաղացողներ ունի, նա պարտված է հա-  
մարվում:

Այս խաղը զարգացնում է յերեխայի  
կենտրոնանալու և արագ վազելու ունա-  
կությունները:

#### 6. ՎՈՐՍՈՐԴԸ ՅԵՎ ԹՈՉՈՒՆՆԵՐԸ

Խաղացողներ՝ 10—50 հոգի:

Խաղավայր՝ դառ, հրապարակ,  
դասարան:

Խաղադաշտի մի ծայրում սահման են  
դնում, վորպես թռչունների բուն, իսկ  
մյուս ծայրում շրջանակ են քաշում, վոր-  
պես վանդակ:

Խաղացողներից 2 կամ 3 հոգի նշա-  
նակվում են վորպես վորսորդներ: Նրանք  
կանգնում են դաշտի կենտրոնում, բնի և  
վանդակի միջև ընկած տարածության վրա:

Մյուս խաղացողները մտնում են բու-  
նը և ամեն մեկը, կամ 2—3 հոգի միացած,  
իրենց համար ընտրում են թռչունների  
անուններ:

Վորսորդն սկսում է զանազան թռչուն-  
ների անուններ տալ: Նրանք, ովքեր վոր-  
սորդի այդ թռչունների անուններն ու-  
նեն, սկսում են վազել դեպի վանդակը:

Վորսորդների կողմից խփված կամ բռն-  
ված թռչունները խաղից դուրս են գալիս:

Նախապես վորոշված ժամանակը լրա-  
նալուց հետո, հաղթում են այն թռչուն-  
ները, վորոնք չեն բռնվել:

Յերբ թռչունները բոլորն ել փախել  
ու տեղավորվել են վանդակում, վորսորդ-  
ներն սկսում են կանչել թռչուններին  
վանդակից:

Յեթե խաղացողները փոքրահասակ են  
(5—6 տարեկան), խփված թռչունները վոչ  
թե դուրս են գալիս խաղից, այլ ավերա-  
նում են վորսորդների վրա:

Այս խաղը յերեխաներին ծանոթաց-  
նում է զանազան թռչունների և զարգաց-  
նում նրանց վազելու ունակությունները:

## 7. ԳԱՅԼՆ ՈՒ ՎՈԶԽԱՐՆԵՐԸ

Խաղացողներ՝ 10—20 հոգի:

Խաղավայր՝ դաւոս, հրապարակ:

Խաղացողներին մեկը նշանակվում է գայլ, իսկ մյուսները՝ վոչխարներ:

Գայլը կարող է վոչխարներին բռնել միայն կես գիշերին:

Սազն սկսում է գայլը: Նա կանգնած է լինում մի անկյունում, վորտեղ նշանակված է իր վորջը:

Վոչխարները կանգնած են փարախում (զիմացի անկյունում):

Գայլը, թողնելով իր վորջը, թափառում է խաղավայրում, վորս ճարելու համար:

Վոչխարները դուրս են գալիս փարախից ու ցրվում դաշտի վրա, աշխատելով զգուշությամբ մոտենալ գայլին:

Վոչխարները ջղայնացնում են գայլին, հարցնելով, թե, «ժամի քանիսն է»:

Յերբ գայլը պատասխանում է, «ժամի 3-ն է», կամ «10-ը» և այլն, վոչխարներն իրենց ապահով են զգում: Բայց յերբ նա ասում է, «Կես գիշեր է», այդ դեպ-

քում վոչխարներն աշխատում են փախչել դեպի փարախը:

Այն վոչխարը, վորին գայլը բռնում է, նրա հետ դերերը փոխում են:

Այս խաղը յերեխայի մեջ զարգացնում է խիզախություն և նրբամտություն:

Յերկչոտ և պասսիվ յերեխաներին պետք է քաջալերել, վոր սիրտ անեն գայլին մոտենալու, սովորեն տիրապետել իրենց շարժումներին, մարմնին, և գայլի համար դժվարություններ ստեղծեն:

## 8. ԱՐԶԵՍՏԱՎՈՐՆԵՐ

Խաղացողներ՝ 10—50 հոգի:

Խաղավայր՝ դաւոս, հրապարակ, դասարան:

Խաղացողները բաժանվում են յերկու խմբի:

Մի խումբը դասարանից դուրս է գնում, իսկ մյուսը վորոշում է մի արհեստ կամ զործարանի աշխատանք, որինակ՝ զարբնոցի, հյուսնոցի, կոնսերվի զործարանի, խոհանոցի աշխատանքներ կատարել համբ շարժումներով:

Այս աշխատանքները բաժանվում է

տվյալ խմբի խաղացողներին վրա, վորոնք կատարում են իրենց հանձնարարված շարժումներն անձայն:

Յերկրորդ խումբը ներս է մտնում և աշխատում է կատարած շարժումներից իմանալ թե ինչ աշխատանք է:



Ճիշտ վորոշելու դեպքում դերերը փոխում են, սխալվելու դեպքում նույն խումբը նորից դուրս է գնում:

Այս խաղը յերեխաներին ծանոթացնում է զանազան աշխատանքների ձևերին ու բնույթին:

## 9. ՎՈՐՍՈՐԴԸ ԾՈՎԻ ՎՐԱ

Խաղացողներ՝ 10—30 հոգի:

Խաղավայր՝ սենյակ, դահլ, դասարան:

Խաղացողները կազմում են շրջան, իրար ձեռքից բռնած, վորպես ճայեր: Խաղացողներից մեկ կամ յերկու հո-



գի (նայած խաղացողների թվին) նշանակվում են վորպես վորսորդներ ու կանգնում են շրջանի կենտրոնում, իբրև թե նավի վրա են:

Ճայերն սկսում են պարել վորսորդների շուրջը և յերգել.

Վորսորդը ծովի վրա,

վորսորդը նավի վրա,

Վորսորդը խփեց բազին—  
Բնւմ:

Պարոզները միաբերան «բնւմ» ասե-  
լուն պես, պպզում են:

Այս միջոցին, վորսորդները, նախքան  
ճայերի պպզելը, աշխատում են նրանց խը-  
փել:

Սփվողները վորսորդներին հետ տեղե-  
րը փոխում են, և շարունակում խաղը:

Սաղը դարգացնում է ճարպիկություն  
և ըմբռնողություն:

## 10. ԾԱՂԻԿՆԵՐԻ ՏՈՆԸ

Սաղացողները բաժանվում են յերկու  
խմբերի— ծաղիկներ և հոկտեմբերիկներ:

Իաշտի մի մասում կանգնում են ծա-  
ղիկները, իսկ մյուսում՝ հոկտեմբերիկ-  
ները:

Ծաղիկներից յուրաքանչյուրը վերց-  
նում է մի ծաղիկ անուն— վարդ, մանի-  
շակ, անթառամ, հատիրուկ, նարզիզ, լալա,  
շուշան և այլն:

Սաղն սկսված է համարվում այն ժա-  
մանակ, յերբ ծաղիկները, դուրս գալով

իրենց սահմանից, սկսում են քամու մեղմ  
սոսափյունի տակ որորվելով, յերգել:

Այլ ու ալվան վառ մայիս,

Դու ամենից լավ ամիս,

Կյանք ու արև ես տալիս,

Ինչ սիրուն ես, ջան մայիս:

Յերգը վերջացնելուց հետո, բոլորը  
միասին սկսում են ծափ տալ և ծաղիկնե-  
րից մեկն սկսում է պարել:

Յերբ պարը վերջանում է, վարդն սկը-  
սում է յերգել:

Յես ծաղիկ եմ մայիսի վարդ,

Ծաղիկների թագուհի,

Ինձ սիրում է ամեն մի մարդ

Յես հոտ ունեմ բուրավի:

Թե իմանաք յես ով եմ:

Բոլորն միասին սկսում են յերգել:

Դու ծաղիկ ես ալ ու ալվան

Ծաղիկների արդ ու վարդ

Ո՞վ չգիտե քեզ աննման,

Ա՛յ աննման կարմիր վարդ:

Յերգը վերջացնելուց հետո, մանու-  
շակն սկսում է արտասանել:

Կապույտ գլխով կանաչ փոտով,

Յես ծաղիկ եմ անուշ հոտով,

Թեև տունկա փոքրիկ ե, ցած,

Արտաներում միշտ թագ կացած,  
Բայց իմ փունջն ամենի տան,  
Կոլխոյնիկի, բանվորի տան,  
Իբրև գարնան առաջին զարդ  
Տեսնում ե միշտ ամեն մի մարդ:  
Արտասանությունից հետո, բոլորը  
միասին կլոր պար են պարում, հետո կըր-  
կին ցրվում, կանգնում են նախկին տե-  
ղերում:

Հասմիկը յերգում ե.

Հենց վոր կգա անուշ գարուն,  
Կրժքին բազմած յես կգամ,  
Իմ առլասե թաթիկներուն  
Կապույտ-կապույտ գույն կտամ:  
Թե իմանաք ես ով եմ:

Ծաղիկները յերգում են.

Անգակ-զանգակ քնքուշ ծաղիկ,  
Սպիտակի հետ կապուտիկ,  
Դու հասմիկն ես շող ու շաղիկ  
Թերթիկներդ կապուտիկ:

Անթառամը յերգում ե.

Յես ծաղիկ եմ մշտագալար,  
Անթառամն եմ բեղմնարար,  
Բոլոր ծաղկանց գույնն ու հոտը  
Յես բերել եմ ձեզ համար:

Բոլոր ծաղիկները միասին ծափ տա-  
լով, տեղում պարում են ու յերգում.

Հանդ ու այգի զարդարուն,  
Հովսե թաղում դաշտերում,  
Թռչուններն են քեզ գովում,  
Ի՞նչ նախշուն ես, լավ մայիս:

Յերգից հետո բոլորը կանգնում են ի-  
րենց տեղերը և մեզմ որորվում:

Ծաղիկների այս բոլոր յերգերի, պա-  
րերի և արտասանությունների ժամանակ,  
հոկտեմբերիկները դաշտի մի անկյունում,  
թովում են ու յերգում.

Ծաղկունքով շողուն մայիս,  
Վարդաբեր կարմիր ամիս,  
Վառ հրճվանքով բերկրանքով  
Մենք քեզ վողջույն ենք տալիս:

Շողերի տակ ցուլցուն  
Մենք հոկտեմբերիկ շողշողուն  
Ամեն մեկս մի ծաղիկ  
Հոս ենք բուրում գեղեցիկ:

Արևի հետ շող գեմքեր,  
Ծաղկոտ վարդոտ ալ մայիս,  
Մենք քեզ վողջույն ենք տալիս:

Հոկտեմբերիկները նույնպես յուրա-  
քանչյուր առնը յերգելուց հետո, պարում,  
արտասանում են:

Յերբ ծաղիկները վերջին առևնը յերգել են և կրկին կանգնել իրենց տեղերում, որորվում են:

Հոկտեմբերիկները մեկն ասում ե:  
«Ընկերներ, գնանք ծաղիկներ քաղենք»:

Բոլորը միասին—«Գնանք, գնանք»:  
Այս ասելիս բոլոր հոկտեմբերիկները դուրս են գալիս և թռչունների ու թիթեռների պես, թևերը թափահարելով, վազում են ծաղիկներ քաղելու:

Նրանք ման են գալիս ծաղիկների մեջ ու յերգում:

Մենք ժիր, առույգ հոկտեմբերիկ, Բերել ենք ձեզ աչքալուսիկ,  
Բերել ենք քաղցրիկ յերգեր,  
Ձեզ վառ ծաղկունք կարմիր վարդեր:  
Վերջին տողը յերգելիս, վոր ծաղկի առևնը վոր արվեց, այդ ծաղիկների առևններ ունեցող յերեխաներն «Ա՛Հ» ասելով փախչում են իրենց սահմանը: Հոկտեմբերիկներն աշխատում են բռնել նրանց: Բռնվողները դուրս են գալիս խաղից:

Հոկտեմբերիկները կրկին ման են գալիս մնացած ծաղիկների մեջ և յերգում

նույն յերգը, միշտ վերջին տողը յերգելիս, ծաղկի առևնը փոխում են:

Այսպես խաղը շարունակվում է մինչև բոլոր ծաղիկների առևնները արվի և դաշտի վրա վոչ մի ծաղիկ չմնա, այսինքն կամ բռնված լինեն հոկտեմբերիկների կողմից, կամ փախած լինեն ծաղիկների սահմանը:

## 11. ԿԱՏՈՒՆ ՅԵՎ ՄԿՆԵՐԸ

Խաղացողներ՝ 5—30 հոգի:

Խաղավայր՝ դասարան, տան:

Խաղացողներից մեկն ընտրվում է իբրև ԿԱՏՈՒ, վորը թագնվում է ուսուցչի սեղանի տակ:

Մյուս խաղացողները, վորպես մկներ, իրենց համար նշանակում են ծակեր (ներստարան, աթոռ, կամ հատակի վրա կավիճով նշան են անում) և սպասում նրանց մոտ:

Ուսուցիչը ձեռքով կամ գլխով նշան է անում մկներին: Մկները կամաց մոտենում են սեղանին և սկսում ճանկոտել սեղանը, իբրև թե շաքար են ուտում:

Կատուն, այս ճանկուտոցը լսելուն պես,  
դուրս ե ցատկում սեղանի տակից և հար-  
ձակվում մկներին վրա:

Մկներն իրենց կյանքը կարող են ա-  
զատել միմիայն փախչելով ու իրենց ծա-  
կը մանելով:

Կատվի կողմից բռնվող մուկը, փոխում  
ե իր դերը և տեղը կատվի հետ, իսկ չհա-  
ջողվելու դեպքում, կրկին նույն ձևով շա-  
րունակվում ե խաղը. նույն խաղացողը  
մնում ե փորպես կատու:

Այս խաղը զարգացնում ե յերեխանե-  
րի վազելու և ուշագիծը լինելու ունակու-  
թյունը:

## 12. ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

Խաղացողներ՝ 10—30 հոգի:

Խաղալայր՝ դասարան, դահլ:

Խաղացողներին մեկը կանգնում ե ու-  
սուցչի մոտ և աչքերն իր թաշկինակով  
կապում, կամ ձեռքերով փակում ե:

Մյուս խաղացողները կանգնում են  
նրա յետևը, դեմքերը դեպի ուսուցիչը  
դարձրած:

Ուսուցիչը լուռթյամբ մատնացույց ե

անում մի խաղացողի, փորը մի քայլա-  
ուշ գալով, փոխված ձայնով աչքերը փա-  
կողին ասում ե. «ԲԱՐԻ ԼՈՒՅՍ, ՍԵՒՍ»,  
(աչքերը փակողի անունը ճիշտ պետք ե ա-  
սել):

Յեթե աչքերը փակողը կարողացավ  
ճիշտ ասել հարցնողի անունը, նրա հետ  
տեղերը փոխում են, և խաղը նորից սկը-  
վում ե, իսկ յեթե չիմացավ, մի ուրիշն ե  
«ԲԱՐԻ ԼՈՒՅՍ» ասում:

Աչքեր փակողն իրավունք ունի «ԲԱ-  
ՐԻ ԼՈՒՅՍ» ասողին յերեք անգամ կրկնել  
տալ, յեթե չի կարողանում մի անգա-  
մից նրա ով լինելն իմանալ:

Այս խաղը զարգացնում ե յերեխայի  
հիշելու, և լսելու ունակությունները:

## 13. ԱՆՏՈՒՆ ՍԿՅՈՒՌԸ

Խաղացողներին մեծ մասը կանգնում  
ե խումբ-խումբ, ցրված դաշտի վրա:

Յուրաքանչյուր խումբ (3 կամ 4 հո-  
գի) ձեռքերն իրար ուսերի դրած, կազ-  
մում են շրջան, փորպես ծառի խոռոչներ:

Մնացած խաղացողները, փորոնք խո-  
ռոչներից մի հոգով ավելի յեն, ներկայաց-

նում են վորպես սկյուռներ, և կանգնում  
գաշից դուրս, խոռոչներից 15—20 քայլ  
հեռավորության վրա:

Յերբ ուսուցիչը կամ խաղի առաջնոր-  
դը ծափ է տալիս, բոլոր սկյուռները վա-  
զում, մտնում են ծառի խոռոչները:

Վոր սկյուռը մնա առանց խոռոչի, նա  
դառնում է անտուն սկյուռը:

Անտուն սկյուռը կանգնում է խոռոչ-



ներից 5—10 քայլ հեռավորության վրա,  
նախապես նշանակված վայրում:

խոռոչների մեջ գտնվող սկյուռներն

ամեն անգամ ուսուցչի ծափ տալուց հե-  
տո, սկսում են արագ փոխել իրենց խո-  
ռոչները: Այս ժամանակ, անտուն սկյուռն  
աշխատում է արագ մտնել մի խոռոչ:

Հաջողվելու դեպքում, դուրս մնացող  
սկյուռը դառնում է անտուն սկյուռ. և  
կանգնում նշանակված վայրում:

Վորպեսզի խոռոչ կազմող խաղացող-  
ներն սկստիվ մասնակից լինեն խաղին,  
ուսուցիչը պետք է խաղի ընթացքում փո-  
խի նրանց, նախկին սկյուռ խաղացողնե-  
րին խոռոչի դեր տալով:

Յեթե զաստիանը կամ հրապարակը  
լայն է և հարմարություններ ունի, փո-  
խանակ խոռոչները յերեխաներից կազմե-  
լու, կարելի յե գետնի վրա շրջաններ գծել:

#### 14. ԱՆԲՈՒՆ ԿԿՈՒՆ

Խաղացողները բռնում են իրար ձեռ-  
քից և շրջանաձև կանգնում:

Յուրաքանչյուր գույգի ձեռքերի ա-  
րանքում կանգնում է մի խաղացող:

Դա թուշուն է, վոր ապրում է բնի մեջ:  
Մի թուշուն բուն չունի:

«Կու-կու, կու-կու» գոչելով թուշու-  
տում է բների շուրջը:

Դա անբուն կկուն ե:

Յերբ կկուն ասում կամ յերգում ե՝

Չալիկ մալիկ թուշուններ,

Իմ սիրունիկ քույրիկներ,

Ի՞նչ եք նստել բներում,

Արեգակն ե վառ փայլում.

Ձեր բներից դուրս յեկեք,

Խաղացեք ու յերգեցեք:

Թուշուններն իրենց բներից դուրս են գալիս և ձեռքերը թևերի պես թափահարելով, յուրաքանչյուրը վորևե թուշնի ձայն հանելով, վազվզում են:

Կկուն ել նույն ե անում:

Իսկ յերբ կկուն ասում, կամ յերգում ե՝

Տեսեք, տեսեք յերկնքում,

Չար բազեն ե պտտվում:

Դե, քույրիկներ, շտապեք

Ձեր բներում թագ կացեք:

Թուշունները վազում, մտնում են իրենց բները:

Կկուն, վոր բուն չունի, մտնում ե

Թուշուններից մեկի բունը:

Այն թուշունը, վորի բունն ե մտնում

կկուն և նա մնում ե գրսում, դառնում ե

կկու և խաղը նույն ձևով շարունակվում ե:

— Յերեխաներ, ձեր աջ ձեռքը դրեք սեղանի վրա, փակեք մասներդ բացի ցուցամատից: Ա՛յ, այդպես: Հիմա, յերբ յես ասեմ «ՔԻԹ», դուք իսկույն ցուցամատը դրեք քթի վրա, յերբ ասեմ «ՄՈՄ», անմիջապես իջեցրեք սեղանի վրա: Յես ձեզ միջապես իջեցրեք սեղանի վրա: Յես ձեզ շփոթեցնելու համար «ՔԻԹ» ասելիս մատս կզնեմ սեղանի վրա, կամ «ՄՈՄ» ասելիս, մատս կտանեմ դեպի քիթը: Բայց դուք պետք ե ուշադիր լինեք, լավ լսեք, թե ինչ եմ ասում և վոչ թե ինչ եմ անում: Ովքեր սխալվեն, մեզ համար կյերգեն, կարտասանեն, կպարեն, կանեն այն, ինչ վոր մենք կվորոշենք:

— Այն, շատ լավ խաղ ե, սկսենք:

## 16. ԹԱՇԿԻՆԱԿ ԳՅԵԼ

Խաղացողներ՝ 10—50 հոգի:

Խաղավայր՝ դահլ, հրապարակ, դատարան:

Խաղացողները կազմում են խիտ շրջան:

Մեկին ընարում են խաղ սկսող:

Սա մի թաշկինակ ձեռքն առած ման ե գալիս շրջանի շուրջը և զգուշությամբ

Թաշկինակը գցում խաղացողներինց մեկի  
յետևը ու շարունակում իր ճանապարհը:  
Յերբ նա կարողացավ կեղծել, վոր իբր Թե  
դեռ Թաշկինակը չի գցել և հասավ նույն խա-  
ղացողին, գետնից վերցնում է Թաշկինա-  
կը և այդ խաղացողին ծեծելով պտտա-  
ցրնում է շրջանի չորս կողմը և կրկին բե-  
րում իր տեղը: Խաղ սկսողը նորից շարու-  
նակում է խաղը:

Յերբ Թաշկինակը գցած ժամանակ  
ավյալ խաղացողը գգում է, անմիջապես  
առնում է Թաշկինակը և հետապնդում  
խաղ սկսողին, մինչև նա հասնի այն բաց  
տեղը, վորտեղ ինքն եր կանգնել:

Այս դեպքում խաղը շարունակում է  
վերջինս:

Խաղի ժամանակ խաղացողներին ի-  
րենց յետևը նայել չի թույլատրվում:

### 17. ՎԱՐԻ՞ՆԸ, ՅԵ ՎԵՐԻՆԸ

Խաղացողներ՝ մինչև՛ 30 հոգի:

Խաղավայր՝ դասարան, դահլ, հրապարակ:

Խաղացողները բաժանվում են յերկու  
մասի և նստում իրար դիմաց:

Շարքով լինելը պարտադիր չէ:

Յուրաքանչյուր կողմն ունենում է վո-  
րոշ քանակությամբ մանր քարեր, կամ  
լոբի:

Խաղ սկսողը մի լոբի յե պահում իր  
բուռնցքներից մեկում, բուռնցքները ի-  
բար վրա դնում և դիմում խաղացողնե-  
րին՝ ասելով, — «Կուզենա՞ք, կուզենա՞ք, վա-  
րի՞նը Թե վերինը կուզենաք»: Մյուս խում-  
բը, կուեկտիվ կերպով վորոշելով, առա-  
ջարկում է իրենց ուզած բուռնցքը բաց  
անել:

Յեթե լոբին գտան, պահողներն իրենք  
են լինում, մինևույն ժամանակ մյուս  
խմբից մի լոբի յեն առնում, իսկ յեթե  
չգտան, մի լոբի յեն տալիս հակառակոր-  
դին:

Խաղը վերջանալուց հետո, դասատուն  
առաջարկում է խմբերին համարել իրենց  
լոբիները:

Վոր կողմն շատ լոբի յե ունենում, այն  
կողմն ել խաղը շահում է:

— —

18. Տ Ո Ւ Ն Ն Ե Լ

Նաղացողներ՝ 10—50 հոգի:

Նաղավայր՝ դաւոճ. հրապարակ, դասարան:

Դաշնամուրի նվագածությամբ խաղացողները զույգ-զույգ, իրար ձեռքից բռնած, քայլում են ծոծրակի ուղղությամբ:

Մի քանի բույեյից հետո, նվագի ձայնը կարվում է:

Նաղացողներն անմիջապես կանգնում են իրար ձեռքերից բռնած զույգերով, խտանում են առաջ և ձեռքերը վեր բարձրացնելով, կազմում տուններ:

Նվագն սկսվում է: Նաղացողների վերջին զույգն անցնում է տունների միջից ու գնում, կանգնում առաջին զույգի առաջ:

Բոլոր զույգերը հերթական կարգով նույնն են կատարում:

Նվագը դադարում է: Բոլորը զույգերով կանգնում են ծոծրակի ուղղությամբ, ձեռքերը վեր պահած:

Նաղացողների առաջին զույգը, նվագածությամբ մտնում է տունների մեջ և ամեն մեկը մի նոր ընկեր վերցնելով,

գնում է և շարվում վերջին զույգի յետևը:

Այսպես, բոլոր զույգերը հերթական կարգով տուններից անցնելով, ընտրում են իրենց համար նոր ընկերներ և նոր զույգեր կազմելով, փոխում են տունների դիրքը:

Այս խաղը սովորեցնում է նոր շարքեր կազմելու ձևը:

19. Ա Ղ Ա Վ Ն Ի Թ Ռ Ց Ն Ե Լ Ը

Նաղացողներ՝ մինչեւ 30 հոգի:


Նաղավայր՝ դաւոճ, հրապարակ:

Նաղացողները կանգնում են յերեքական հոգուց բաղկացած խմբակներով: Նրաբակներին մեկը, սովորաբար ամենափոքրը, ներկայացնում է աղամբի, մի ուրիշը, հասակով քիչ յերկար՝ բազե, իսկ ամենամեծը՝ թռչնատեր:

Աղամբին կանգնում է թռչնատիրոջ առաջ: Վերջինս նրա ուսերից յերկու ձեռքով բռնում, քաշում իրեն, տանում է առաջ և բաց թողնում:

Աղամբին թեվերը տարածած վազում

ե, սավառնող աղափնու պատկեր տարով՝  
Յերբ աղափնին բավականին հեռանում ե,  
թռչնատերը նույն ձևով բաց ե թողնում  
բազեյին, աղափնուն բռնելու համար: Բա-  
զեն վազում ե աղափնու հետքով բազուկ-  
ները լայն տարածած, բազեյի ձայն հա-  
նելով:



Թռչնատերը ծափահարում ե, վոր նշա-  
նակում ե թե կանչում ե աղափնուն: Ա-  
ղափնին աշխատում ե անմիջապես վերա-  
դառնալ, աշխատելով վոր բազեն իրեն  
չբռնի: Բոլոր թռչնատերերն աղափնինե-  
րին կանչելու ժամանակ պետք ե զոգա-  
վոր ավերով ծափ տան, վորպեսզի ձայնը  
հաստ հնչի և լսելի լինի:

Ազդանշան կարելի չե տալ այն ժա-

մանակ, յերբ աղափնիները բավականի  
հեռացել են:

Առանց ազդանշանի աղափնիները տուն  
գալու իրավունք չունեն:

Յերեխաների հետաքրքրությանը բա-  
վարարություն տալու համար, ղեկավարը  
պետք ե պատմի թե ինչպես բազեներին  
սովորեցնում են աղափնի բռնել:

## 20. Թ Ե Լ ՈՒ Ա Ս Ե Ղ

Սաղացողներ՝ մինչեվ 50 հոգի:

Սաղավայր՝ դասարան, դահլ, հրապարակ:

Սաղացողները կանգնում են շրջանա-  
կում, թևերը զեպի կողմ տարածած:  
Նրանք իրենց ձեռները հանգուցում են  
մեկը մյուսի ուսերի վրա, վորով շրջանա-  
կը մեծանում ե և խաղացողների միջև  
լայն տարածություն ե մնում:

Սաղացողներից մեկն լինում ե ասեղ,  
իսկ մի ուրիշը՝ թել:

Ազդանշան տալուց, ասեղն արագ-ա-  
րագ վազում ե և ներս ու դուրս անում  
խաղացողների թևերի տակից: Յերբեմն

ուղղակի արագ շուլալ ե անում: Թելը նրան հետապնդում ե, անպայման նույն անցքերից:

Յեթե նրան հաջողվեց ասեղին խփել, յերկուսն ել դառնում են խաղացող և մի ուրիշ գույգ ե գալիս խաղալու, իսկ յեթե վոչ՝ նա պիտի շարունակի խաղը, մինչև ինքնաբերաբար հրաժարվի հետապնդելուց, կամ ուսուցիչը նկատելով նրա հոգնածությունը՝ փոխի:

Յեթե վազելու ժամանակ թելը հերթով նույն անցքերից չանցավ, վորոնցից անցել ե ասեղը, կտրված ե համարվում, միանում ե խաղացողներին և մի ուրիշն ե գալիս նրա պարտականությունը կատարելու:

Յեթե խաղացողները շատ են, թելերի և ասեղների թիվը կարելի յե շատացնել:

## II. 6 — 11 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍԱԿ ՈՒՆԵՑՈՂ ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### 21. ԲՈՒԼԱՎԱՆԵՐԻ ԵՍՏԱՑԵՏ

Խաղացողներ՝ 10 — 40 հոգի:

Խաղավայր՝ դասարան, դաճես, հրապարակ:

Խաղացողները բաժանվում են հավասար թվով մի քանի խմբերի (նայած խաղացողների թվին):

Խմբերը կանգնում են գետնի վրա քաշած հորիզոնական գծի մոտ, ծոճրակի ուղղությամբ շարված:

Յուրաքանչյուր խմբի հեռավորությունը մյուսից կես մետր պետք ե լինի:

Խմբերի ղիմաց, գծից 10 — 15 մետր հեռավորության վրա, յուրաքանչյուր խմբի համար գետնի վրա գծում են մի շրջագիծ և մի բուլավա տնկում նրա մեջ:

Խաղն սկսելու ազդանշան արվելուն պես, խմբերի առաջին խաղացողները վազում են ձեռքով գցում բուլավան, վերադառնում, խփում հաջորդ խաղացողին: Սը-

րանք վազում են տնկում բուլավան շրջազծի մեջ և գալիս խփում հաջորդ խաղացողին:

Շահում է այն խումբը, վորի վերջին խաղացողը շուտ է վերջացնում իր պարտականությունը:



Սխալ են համարվում ու չեն շահում.

1. Յերբ բուլավան պետք է գցել, բայց չեն գցում, ժամանակ շահած լինելու համար:
2. Յերբ բուլավան պետք է տնկել, բայց չեն տնկում:
3. Դեռևս ընկերը գծին չհասած, հա-

ջորդ խաղացողը վազում է դեպի բուլավաները:

4. Յերբ բուլավան լավ չի տնկվում, ընկնում է: Այս դեպքում խաղացողը պետք է կրկին վերադառնա բուլավան տնկի և ապա վերադառնա:

Այս խաղը դարգացնում է յերեխայի վազելու և ուշադրությամբ գործ կատարելու ունակությունը:

## 22. ԱՆԻՎ

Խաղացողներ՝ 10—50 հոգի:

Խաղավայր՝ դառ, հրապարակ:

Հատակի վրա գծում են մի մեծ շրջազիծ:

Շրջազիծից դեպի ներս, իրարից հավասար հեռավորությամբ, քաշում են 3—5 շառավիղ, ճիշտ այնպես, ինչպես անիվը:

Խաղացողներին բաժանում են 3—5 հավասար խմբերի և կանգնեցնում շառավիղների վրա ծոծրակի ուղղությամբ, յերեսները շրջազծի կենտրոնը դարձրած:

Խաղացողներից մեկը, վորը վորևե խմբի չի պատկանում, քայլում է շրջազծի

շուրջը և ձեռքով խփում վորևե խմբի խաղացողի, գոչելով. «ԱՆԻՎԸ ՊՏՏՎՈՒՄ Ե»:

Այդ խումբն «Անիվը պատվում ե» ազգանշանը լսելուն պես, անմիջապես խաղն սկսողի հետ միասին սկսում ե վազել շրջազծի դրսի կողմից և կրկին վերադառնում, շարվում իրենց գծի վրա:

Մաղն սկսողը նույնպես արագ վազքով ավյալ խմբի խաղացողներին հետ, վազում ե և աշխատում ե տեղ գրավել այդ գծի վրա:

Դուրս մնացող խաղացողը դառնում ե խաղն սկսող և նախկին ձևով շարունակում խաղը:

Մաղացողներն աշխատում են խաղն սկսող չդառնար:

Շառավիղների քանակը կարելի յե փոփոխել, նայած թե ինչ տարիքի խաղացողներ են:

### 23. Հ Ա Մ Ր Ե Ր

Մաղացողներ՝ 10—35 հոգի:

Մաղավայր՝ դասարան, դահլ, պարտեզ:

Մաղացողները կազմում են շրջան: Դասատուն մտնում ե շրջանի մեջ և սկսում

ե խաղացողներին հարցեր տալ. որինակ՝ «Անունդ ինչ ե», «Քանի՞ տարեկան ես», «Փիղն ե մեծ, թե սկյուռը» և այլն: Ում վոր հարց ե տրվում, չպիտի պատասխանի, վորովհետև նա համրն ե: Հարցերին անմիջապես պիտի պատասխանի աջ կողմի ընկերը:

Նա, ով կակազում ե, սխալ պատասխաններ ե տալիս, կամ իրեն ուղղված հարցին ինքն ե պատասխանում, փոխանակ իր աջ կողմի ընկերը, փոխում ե իր տեղը խաղն սկսողի հետ:

Հարցերը պետք ե լինեն կարճ, զվարճալի, բայց հետաքրքրական, մանավանդ յեթե խաղին մասնակցում են 5 տարեկանից բարձր տարիք ունեցողները:

Այս խաղը զարգացնում ե մտածելու, ըմբռնելու և հիշելու ունակությունները:

### 24. Գ Ն Դ Ա Կ Բ ՈՆ Ո Ղ Ն Ե Ր Ը

Մաղացողներ՝ 5—25 հոգի:

Մաղավայր՝ դահլ, հրապարակ, դասարան:

Մաղացողները կազմում են շրջան: Նրանցից մեկը վերցնում ե թեթև վալեյ-

բոլի կամ ուետինն մի գնդակ ու մտնում  
շրջանի մեջ:

Նա գնդակը գցում է ողում և միա-  
ժամանակ կանչում շրջանում կանգնող-  
ներին մեկի անունը:

Կանչվողն անմիջապես վազում է շրջա-  
նի կենտրոնը և աշխատում է բռնել գըն-  
դակը, յերբ մի անգամ գետին կպչելով  
կրկին վերև է թռչում:

Հաջողվելու դեպքում սկզբի խաղացողի  
հետ տեղերը փոխում են, իսկ յեթե վոչ,  
նախկին խաղացողը շարունակում է խաղը  
մի ուրիշին կանչելով:

Կարելի չէ սկզբից պայմանավորվել  
յերեխաների հետ, վոր նախքան գնդակը  
գետինն կպչելը, բռնեն ողի մեջ:

Այս խաղը կարելի չէ աստիճանաբար  
բարդացնել, յեթե յերեխաներն արգեն  
գնդակ բռնելու ունակությունները ձեռք  
են բերել:

Սաղացողներ շատ լինելու դեպքում,  
խաղն սկսողները լինում են 2 կամ 3 հոգի:

## 25. ՆՇԱՆԱՌՈՒ ՓՆՁԻԿ

Սաղացողներ՝ 10—30 հոգի:

Սաղավաթը՝ դասարան, դահլ, հրապարակ:

Այս խաղի համար պետք է պատրաս-  
տել տալ 8—10 հատ 10—15 քառակուսի  
սանտիմետր մակերես ունեցող և 2 սմ.  
հաստություն ունեցող փոքրիկ տախտակ-  
ներ, կամ նույն քանակությամբ վողորկ  
քարեր:

Սաղադաշտի կամ հատակի վրա քաշ-  
վում է մի գիծ: Այդ գծից 4—6 մետր հե-  
ռու, իրարից մեկական փոտնաչափ հեռա-  
վորությամբ, քաշվում է 3 քառակուսի,  
համեմատական մեծությամբ:

Սաղագծի մոտ գտնվող քառակուսին  
լինում է ամենամեծը, վորի մեջ կավիճով  
գրվում է 1, միջակ քառակուսու մեջ՝ 2,  
իսկ վերջին, փոքրի մեջը՝ 3:

Սաղի նպատակն է 3 փոքրիկ տախ-  
տակները գծի վրայից գցել քառակուսի-  
ների մեջ:

Քառակուսիների մեջ ընկած տախ-  
տակները, համաձայն քառակուսիների  
թվանշանների, գումարվում է և գրվում

այդ շարքի տվյալ խաղացողի անվան դիմացը:

Սաղացողները բաժանվում են յերկու կամ ավելի հավասար թվով խմբերի:

Սմբերը կանգնում են գծի վրա ծոճբակով շարված:

Դասատուն իր մոտ պետք է ունենա խաղացողների անվանացուցակներն ըստ խմբերի:

Վոր խմբի խաղացողի անունը կանչվեց, նա մոտենում է գծի կենտրոնին, վերցնում 3 տախտակները և գցում քառակուսիների մեջ:

Սաղի վերջում, վոր խումբն ամենաշատ թվանշան շահեց, նա տանում է խաղը:

Սաղի ժամանակը չի սահմանափակվում: Կարելի չէ խաղը կրկնել մի քանի անգամ, յեթե յերեխաները չեն ձանձրացել:

Այս խաղը զարգացնում է յերեխաների աչքի, ձեռքի և նպատակին խփելու ունակությունները:

Սաղացողները շարք են կազմում, յետևի կանգնողները ձեռքները դնում են իրանցից առաջ կանգնողների ուսին:

Սաղացողներից դուրս 2 շարք են կազմում և կանգնում շարքի առաջին: Իրանք ունեն 2 մարգափայտ, աջ կողմի կանգնածները բռնում են աջ ձեռքով, իսկ ձախ կողմի կանգնողները՝ ձախ ձեռքով:

Սաղացողներից մեկը նշանակվում է կոնդուկտոր, նա ունենում է սուլիչ: Կանգնում է բոլորից առաջ և բռնում մարգափայտի յերկու ծայրերից, նույնն է անում նաև շարքի առաջին համարը, վորը կոչվում է առաջին վագոն:

Յերկար շարք կազմողները հանդիսանում են վագոններ, 4 հոգին, — շոգեմեքենա, իսկ բոլորից առաջ կանգնողը՝ կոնդուկտոր:

Ղեկավարի հրահանգով կոնդուկտորը սուլում է: Շոգեշարժը շոգեմեքենայի նման սուլում է:

Կոնդուկտորը սուլում է յերկրորդ անգամ. շոգեմեքենան նույնպես, և զնացքն սկսում է շարժվել նախ դանդաղ ապա արագ, հետո՝ վազքով:

Շարժվելու միջոցին վագոններից յուրաքանչյուրն աշխատում է իր գիտցած ձևով գնացքի ձայներ հանել — 222, 222, ՓրՓրՓր, Փր, ցիմ, ցոմ, փահ, փուհ, փահ, փուհ, թիկ, թակ, թիկ, թակ և այլն:

Այս միջոցին մարզափայտերը շարժվում են յետ ու առաջ, մեքենայի մխոցի պես:

Այսպես խաղը շարունակվում է մինչև այն ժամանակ, յերբ դեկավարը գոչում է «Կամուրջը քանդված է», կամ «Գիծը փչացած է»:

Այդ ժամանակ բոլորը փախչում են զանազան կողմեր, իսկ կոնդուկտորն աշխատում է նախքան վորոշված տեղ հասնելը, մեկն ու մեկին բռնել:

Բռնելուց հետո դերերը փոխվում են, նշանակվում է նոր կոնդուկտոր, կազմվում է նոր շոգեմեքենա և խաղը նույն ձևով շարունակվում է:

## 27. ՅԵՐՐՈՐԴՆ ԱՎԵԼՈՐԴ Ե

Սաղացողներն զույգերով կանգնում են՝ մեծ շրջանակ կազմած: Զույգերը կանգնում են ծոծրակի ուղղությամբ, ի-

րարից մեկ վտանաշափ հեռավորությամբ:

Զույգերի հեռավորությունը մեկը մյուսից, պիտի լինի մի մետրից ավելի:

Սաղացողների մի զույգը, նշանակվում է, վորպես խաղ սկսող, վորոնցից մեկը պիտի լինի № 1, իսկ մյուսը՝ № 2:

Յերբ խաղ սկսելու ազգանշանը տրվում է, № 1 սկսում է վազել շրջանակում, իսկ № 2 աշխատում է նրան խիել: № 1 խփվելուց ազատվում է այն ժամանակ, յերբ նախքան խփվելը, կանգնում է շրջանակում, կանգնած զույգերից մեկն ու մեկի առաջ: Այս դեպքում տվյալ զույգի վերջին խաղացողը դառնում է «ՅԵՐՐՈՐԴ ԱՎԵԼՈՐԴ» — և փախչում է, իսկ № 2 հիմա սկսում է սրան հետապնդել:

Արագ կերպով զույգերը փոխվում, նորանոր զույգեր են կազմվում, մինչև այն ժամանակ, յերբ № 2 փախչողներից մեկին խփում է:

Այս դեպքում դերերը փոխվում են անմիջապես, առանց խաղն ընդհատելու, այսինքն խփվողը դառնում է № 2, իսկ նախկին № 2 դառնում է № 1 և փախչում, շարունակելով խաղը նախկին ձևով:

Դասատուն խաղը փոխում կամ դասը

վերջացնում ե այն ժամանակ, յերբ տեսնում ե, վոր յերեխաները հոգնել են, կամ ժամը վերջացել ե:

Այս խաղը զարգացնում ե յերեխայի վագելու, վտանգից խուսափելու և արագ ըմբռնելու ունակությունները:

## 28. ՈՒՐԱԽ ԽԱՂ

— Մայրիկ ջան, այտոր մանկապարտեզում այնպիսի լավ, այնպիսի ուրախ խաղ ենք սովորել, վճր...

— Ի՞նչ խաղ, բալիկ:

— Այ, ասեմ: Բոլորս նստել եյինք սեղանի շուրջը և լսում եյինք ընկ. Մարգոյին: Նա ասաց. «Յերեխաներ, ում վոր հարց տամ, թող իսկույն կանգնի ու պատասխանի: Մխալ պատասխան տվողը պետք ե յերգի, վոտանավոր ասի, պար գա, կամ կատվի պես մլավի:

Բոլորս ել ուրախությունից ծափ տրվինք:

Ընկ. Մարգոն Կիմիկին հարցրեց.

— Յեթե յերկու խնձոր ունենաս, մեկն ել մայրիկը տա, քանի՞ խնձոր կունենաս:

— 3, — իսկույն պատասխանեց Կիմիկը:

Սեդիկին հարցրեց.

— Յեթե յերկու խնձոր ունենաս, մեկը կորցնես, քանի՞սը կմնա:

— 1-ը, — պատասխանեց Սեդան:

Լևոնին հարցրեց.

— Շունը քանի՞ վոտ ունի:

— 4-ը, — պատասխանեց Լևոնը:

Թամարին հարցրեց.

— Մուկը քանի՞ պոչ ունի:

Թամարը կմկմաց, կմկմաց, մին ել թե՛

— Յերկու:

Մի ծիծաղ բարձրացավ, մի ծիծաղ, վոր ել ինչ ասեմ, մայրիկ:

Հետո Թամարին ասաց, վոր «Շան նրման պիտի հաջես».

Թամարը յետ ու յետ գնաց ու հարձակվեց մեղ վրա. հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ:

Մի ծիծաղ եր, վճր...

## 29. ԳՏՆԵԼ ԻՐԸ


Խաղացողներ՝ 10—30 հոգի:

Խաղավայր՝ ակումբ, սենյակ, դահլիճ:

Խաղի համար անհրաժեշտ ե դաշնամուր կամ յերաժշտական վորևե գործիք:

Խաղացողները հավաքվում են ահումբում կամ մի ընկերոջ բնակարանում:

Խաղացողներից մեկը, կամ մեծահասակ մի ընկեր, վորը գիտե դաշնամուր նվագել, նստում է դաշնամուրի առաջ, իսկ խաղացողներից մեկը սենյակից դուրս է գնում:



Մյուս խաղացողներն սկսում են վորևե իր ընտրել. որիննակ՝ սեղանի վրա դրված հայելին:

Յերբ իրը վորոշված է, դուսի ընկերոջը հրավիրում են ներս:

Իսկ դաշնամուր նվագողն սկսում է մեղմ նվագել, իսկ ներս մտնողն սկսում է դաշ-

նամուրի նվագակցությամբ գտնել վորոշված իրը:

Իսկ դաշնամուր նվագողը պետք է խիստ ուշադրությամբ նվագի: Յեթե խաղացողը նշանակված իրին շատ մոտ է, պետք է նվագի ուժեղ, յեթե հեռու յե, մեղմ, իսկ յեթե շատ հեռու յե, չի նվագում:

Այսպես շարունակվում է խաղը մինչև վոր խաղացողը վորոշված իրը գտնի:

Յերբ գտնում է, խաղացողները ծափահարում են և մի ուրիշին ուղարկում դուրս:

Այս խաղը զարգացնում է յերեխաների լսողությունը և ըմբռնելու կարողությունը:

### 30. ԲՐԻԳԱԴԱՎԱՐ

Խաղացողներ՝ 5—30 հոգի:

Խաղավայր՝ դաս, պարտեզ, հրապարակ:

Խաղացողներից մեկին ընտրում են բրիգադավար:

Մյուս խաղացողները հեռանում են բրիգադավարից, հավաքվում և վորոշում կոլխոզային վորևե աշխատանք. քաղհանել,

ցանել, հնձել, արակտորով հերկել, կով  
կլթել և այլն:

Պայմանավորվելուց հետո, բոլորը միա-  
սին վազում են բրիգադավարի մոտ ու  
ասում.

— Բարե՛վ, ընկ. բրիգադավար:

Բրիգադավարը պատասխանում է.

— Բարև, սիրելի պիոներներ: Ո՞ւր  
եյիք գնացել:

— Գնացել եյինք կոլտնտեսություն  
աշխատելու:

— Ի՞նչ աշխատանք եյիք կատարում:

Յերեխաները շարժումներով ցույց են  
տալիս կատարած աշխատանքը:

Բրիգադավարն աշխատում է իմանալ  
աշխատանքի տեսակը: Յեթե իմանում է,  
միանում է խաղացողներին, նրա տեղ  
նորն է ընտրվում, իսկ յեթե չի իմանում,  
կրկին մնում է բրիգադավարի գերում:

Այս խաղով յերեխաները ծանոթանում  
են կոլտնտեսության աշխատանքներին:

### 31. ԿԱՔՍԱՆ ՊԱՅՔԵՑ

Խաղացողներ՝ 10—20 հոգի:

Խաղավայր՝ դաշտ, հրապարակ:

Խաղացողներին մեկը նշանակվում է  
մեքենավար, մյուս խաղացողները զաշտի  
վրա ընտրում են իրենց համար տեղեր և  
կանգնում փորոշված տեղերում:

Մեքենավարը գոչում է «Վագոններ  
պատասխանե՛ք, մեկնելու ենք դեպի Կիրովա-  
կան»:

Բոլոր խաղացողները ուղղվում, զգաս-  
տանում են. մեքենավարը հրահանգում է.  
«Մեկ, յերկու»:

Բոլոր խաղացողները վազում, շարվում  
են մեքենավարի յետևից և շղթայվելով,  
գնացք են կազմում:

Մեքենավարը մեկնում է, ճանապարհ-  
հին կատարելով գնացքի բոլոր կանոնները.  
սուլում է, յերբ ճանապարհին վտանգ կա,  
ընթացքը դանդաղեցնում է, յերբ հաս-  
նում է կայարանին և այլն:

Մեքենավարը գնացքի արագ վազքի  
ընթացքում հանկարծ գոչում է՝ «Փախե՛ք,  
կարասն պայթեց»:

Այս ասելիս բոլորը փախչում են դե-

պի իրենց տեղերը, իսկ մեքենավարը հետապնդում է նրանց: Թիփոզի հետ դերերը փոխվում են:

Ճարպիկ մեքենավարը յերեխաներին մեծ հաճույք է պատճառում:

Յերբ խաղը վերջացած է, դասատուն կամ կոլվարը կանչում է յերեխաներին և բացատրում գնացքի նշանակության մասին, ու պատմում, թե անուշադիր աշխատողների պատճառով (սլաքավար, մեքենավար, կայարանապետ և այլն), գնացքը խորտակվում է կամ կաթսան պայթում:

### 32. ԳԱԼԻՍ ԵՄ

Խաղացողներ՝ 10—20 հոգի:

Խաղավայր՝ դասարան, հրապարակ:

Խաղացողները նստում են շրջանաձև դասավորված աթոռների վրա:

Ղեկավարը պայմանավորվում է խաղացողների հետ, թե ի՞նչ բնագավառ են ընտրում խաղի համար, որինակ, ղեկավար ընկերների, ովկիանոսների, գետերի, ծառերի, ծաղիկների, վայրի կենդանիների, թռչունների, անունները:

Յենթադրենք պայմանավորվում են թռչունների անուններ:

Ղեկավարը դիմում է խաղացողներից մեկին և ասում.

— Գալիս եմ:

Նա պատասխանում է.

— Վորտեղից ես գալիս:

Ղեկավարը մտքի մեջ պահած թռչունի անվան առաջի տառն ասում է:

Յենթադրենք մտքում պահել է ղեղձանիկ, ասում է.

Դ-ից եմ գալիս:

Ի ուր խաղացողները սկսում են թվել այն թռչունների անունները, վորոնք սկսում են Դ-ով:

Ով գտավ, նա դառնում է ղեկավար և շարունակում խաղը:

Ղեկավարը խաղի ընթացքում պետք է տեղեկություններ տա այն թռչունների տեսակի, գույնի, կենցաղի մասին, վորոնց անունները տրվում են:

Յեթե խաղի ժամին, յերեխաները ցանկանում են փոխել և մի ուրիշ բնագավառ վերցնել, այն դեպքում նույն ձեով խաղն սկսվում է:

Այս խաղի նպատակն է, յերեխաներին

ծանոթացնել զեկավար ընկերների անուններին, պաշտոնին, բուսական, կենդանական, հանքային աշխարհին, ծովերի, գետերի անուններին:

### 33. ՀՈՂՄՆԱՑՈՒՅՑ

Խաղացողներ՝ 10—30 հոգի:

Խաղավայր՝ հրապարակ, դասարան:

Խաղացողներին շարել յերկու կամ յերեք շարք, կամ թողնել ազատ՝ առանց դասավորելու:

Դասատուն կանգնում է շարքի զիմաց և ասում. «ԲԱՄԻՆ ՓԶՈՒՄ Ե ԴԵՊԻ ՀՅՈՒՄԻՍ»: Խաղացողներն իսկույն դառնում են զեպի հյուսիս, արևելք, — դառնում են զեպի արևելք:

Այսպես դասատուն արագ-արագ տալիս է չորս կողմերի անունները, իսկ յերեխաները կատարում են արված հրահանգը:

Յերբեմն դասատուն, կողմերի անունները տալու ժամանակ, հրահանգում է «ՓՈԹՈՐԻԿ»:

Այս զեպքում յերեխաներն սկսում են

կրնկի վրա արագ դառնալ, փոմանք էլ մըրսելու նշաններ են ցույց տալիս: Ապա հրահանգ է արվում «ԱՆՁՐԵՎ»: Յերեխաները գլուխները կախում են և սկսում պատրապարվել անձրևից:

Յերբ հրահանգ է արվում «ԱՐԵՎԸ ԾԱԳԵՑ», յերեխաներն սկսում են ուրախանալ, պարել, թռչկոտալ և այլն:

Այս խաղի միջոցին յերեխաներին ծանոթացնում են կողմնացույցին ու դարձումներին:

Փոքրահասակների համար (5—6 տարեկան) կողմեր ցույց տալու հրահանգի փոխարեն, տալ դարձումներ՝ աջ, ձախ, յետ և այլն:

### 34. ԱԶ ՀԵՏԱՊՆԴԻՐ

Խաղացողներ՝ 10—50 հոգի:

Խաղավայր՝ դահլ, հրապարակ, դասարան:

Խաղացողները շրջան են կազմում իրար շատ մոտիկ, յերկու ձեռները կռնակի վրա դնելով:

Մեկն ընտրվում է իբրև խաղն սկսող: Սա մի գոտի յե առնում և պտտվում շրբ-

Ղանի չորս կողմը: Գոտին շատ զգուշ զնուս  
ե մեկի ձեռքում և կանգնում նրա յետևը:

Գոտի ստացողն անմիջապես սկսում է  
հարվածել իր աջ կողմի ընկերոջը, մինչև  
վոր նրան փախցնելով կրկին վերագարձնի  
իր տեղը: Հիմա նա յե գոտին տանում ու  
տալիս ուրիշ խաղացողի:

Դասատուն պետք է հսկի, վոր հար-  
վածները ցավ չպատճառեն:

### III. 7—11 ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

#### 35. ԳԵՏՆԱԽՆՁՈՐ ՏՆԿԵԼ

Խաղացողներ՝ 10—30 հոգի:


Խաղավայր՝ դառ, հրապարակ, դահլիճ:

Հատակի վրա գծել մի յերկար գիծ: Գծից  
10—15 մետր հեռավորության վրա, իրա-  
րից կես մետր հեռավորությամբ, գետնի  
վրա քաշել յերեք շրջանակ՝ յուրաքան-  
չյուր շարքի դիմաց:

Խաղացողներին բաժանել յերեք հա-

ասար խմբերի և կանգնեցնել գծի վրա,  
ծոճրակով շարված:

Խմբերի հեռավորությունը մեկը մյու-  
սից պետք է լինի շրջանակների հեռավո-  
րության չափ:



Խմբերի առաջին խաղացողներին արը-  
վում է մեկական փոքրիկ տուրակ, մի-  
ջին 3 գետնախնձոր կամ քար:

Խաղն սկսելու ազդանշանը տալիս,  
խմբերի առաջին համարներն արագ վազ-  
քով գնում են տուրակներից գետնախն-  
ձորները մեկ մեկ հանում, դնում շրջա-

գծերի մեջ և իսկույն վերադառնում, տուրակը հանձնում իրենց շարքի հետևյալ համարին:

Սրանք գնում են մեկիկ-մեկիկ հավաքում գեանախնձորները, լցնում տուրակը և բերում հանձնում հաջորդ խաղացողին:

Այսպես շարունակվում է խաղը մինչև վերջին խաղացողը:

Վոր խումբը շուտ վերջացրեց խաղն և տուրակը հանձնեց գատավորին, այն խումբը մի կես շահում է:

2—3 կես շահողները տանում են խաղը:

### 36. ԱՐԱԳԱՎԱԶ ՓՆՁԻԿԸ

Խաղացողներ՝ 10—20 հոգի:

Խաղավայր՝ դառ, հրապարակ, խաղարան:

Հատակի վրա գծել յերկու ուղղահայաց գծեր, իրարից 10—20 մետր հեռավորությամբ:


Խաղացողներին բաժանել յերկու խումբերի, ամեն մի խումբը նույնպես բաժանել յերկու հավասար մասերի—համար առաջիններ և յերկրորդներ:

Համար առաջինները կանգնում են մի

գծի վրա ծոծրակի ուղղությամբ շարված, իսկ համար յերկրորդները՝ հակառակ գծի վրա, իրենց խմբերի գլխաց, նույնպես ծոծրակով շարված:

Իսկապես համար առաջիններին տալիս է մեկական փոքրիկ գրոշակ, կամ վրդկապ:

Յերբ հայտարարվում է «ԽԱՎՆ ՍԿԸՍՎԱԾ Ե», համար առաջիններն արագ վազում են և գրոշակը հանձնում համար յերկ-



րորդ խմբի առաջին խաղացողին և իրենք կանգնում նույն շարքի յետևում:

Դրոշակ ստացողները վազում են հանձնում իրենց խմբի հերթական համարին, և այդպես արագ շարունակվում է խաղը:

Վոր խումբն ամենից շուտ վերջա-

ցրեց, նա շահում է մի կետ: Յերեք կետ շահողները տանում են խաղը:

Այս խաղը զարգացնում է յերեխայի վճռողականությունը, արագաշարժությունը, ըմբռնողականությունը և կոլեկտիվ աշխատանքին մասնակցելու գիտակցությունը:

### 37. ԱՅՈ՛Ղ, ՎՈ՛Չ

Խաղացողներ՝ 10—20 հոգի:

Խաղավայր՝ դասարան, դահլիճ, հրապարակ:

Խաղացողները նստում են սեղանի առաջ, կամ կանգնում շրջանակում:

Սաղն սկսողը հարցեր է տալիս խաղացողներին. որինակ՝ «Խնձոր սիրում ես», «Այսօր ատամներդ մաքրե՞լ ես», «Այս տարի ճամբար գնալու յես», և այլն:

Խաղացողը հարցերին անմիջապես պետք է պատասխանի վոչ թե «այո», կամ «վոչ» ասելով, այլ կրկնելով տված հարցի վերջին բառը՝ «Սիրում եմ», «մաքրել եմ», «գնալու յեմ» և այլն:

Հարցերը տրվում են արագ, պատասխանները՝ նույնպես:

Կակազողները, սխալվողները, այո կամ վոչ ասողները, խաղն սկսողի հետ տեղերը փոխում են:

Այս խաղը սրում է յերեխայի ուշագրությունը և ուշիմությունը:

### 38. ՏԵՍԵ՞Ն ԵՍ ԻՄ ՎՈՉԽԱՐԸ

Խաղացողներ՝ 10—40 հոգի:

Խաղավայր՝ դահլիճ, հրապարակ:

Խաղացողները կազմում են շրջան, նրանցից մեկը նշանակվում է հովիվ:

Հովիվը մտնում է շրջանի կենտրոնը և խաղացողներից մեկին դիմելով, հարցնում. «ՏԵՍԵ՞Ն ԵՍ ԻՄ ՎՈՉԽԱՐԸ»:

Խաղացողը պատասխանում է. «ԻՆՉՊԻՍԻ՞Ն Ե ՔՈ՛ՎՈՉԽԱՐԸ»:

Հովիվն սկսում է նկարագրել իր վոչխարին, աշխատելով նմանեցնել խաղացողներից մեկին:

Խաղացողներից նա, ով ունի նկարագրած նշանները, անմիջապես սկսում է վազել շրջանի շորս կողմը, իսկ հովիվը հետապնդում է:

Յեթե հովիվը կարողացավ խփել փախչողին, նախքան տեղ հասնելը, դերերը

փոխվում են, իսկ յեթե փոջ՝ հովիվը կըրկին մտնում ե շրջանը և շարունակում խաղը նույն ձևով:

Այս խաղը զարգացնում ե յերեխաների մեջ նկարագրելու և ըմբռնելու ունակությունները:

### 39. ՈՁՆ ՈՒ ՃԱԳԱՐՆԵՐԸ

Խաղացողներ՝ 15—30 հոգի:

Խաղափայր՝ դաս, նրապարակ:

Խաղացողներին 5—6 հոգի նշանակվում են, փորպես ՃԱԳԱՐՆԵՐ:



Մյուս խաղացողները, իրար ձեռքերից բռնած, կազմում են շղթա, փորպես ՈՁ:

Շղթայի մի ծայրի խաղացողը, հանդիսանում ե ՈՁԻ ԳԼՈՒԽ, իսկ մյուսը՝ ՊՈՁ:

Յերբ դասատուն հայտարարում ե «ԽԱՂՆ ՄԿՍՎԱԾ Ե», ոձն աշխատում ե ողակի մեջ առնել ճագարներին:

Բռնվող ճագարները մտնում են շղթայի մեջ և խաղը շարունակվում ե, մինչև մնա մի ճագար:

Այդ ճագարը դառնում ե ոձի գլուխ և նորից շղթա յեն կազմում, նախկին ճագարներին փոխարինելով նորերով:

Ճագարները կարող են բռնված համարվել նաև այն դեպքում, յերբ ոձի գլխի կամ պոչի կողմից բռնվում են:

Ճագարների նպատակն ե, բարկացնել ոձին, բայց չբռնվել:

Խաղը զարգացնում ե յերեխայի վազելու, խուսափելու ունակությունները:

### 40. ՍԿՅՈՒՌԸ ՅԵՎ ԸՆԿՈՒՅՁԸ

Խաղացողներ՝ 10—20 հոգի:

Խաղափայր՝ դասարան:

Բոլոր խաղացողները բացի մեկից, նրստում են նստարանների վրա, գլուխները գնում են սեղանին, իբրև թե քնած են:

Ձեռքերը պետք է տարածել սեղանի վրա, ասիները բաց:

Նախապես վորոշված խաղացողը, վորն սկյուռի դերն է կատարելու, ձեռքին բռնած ունի մի ընկույզ, քար, կամ փոքր ուետինե գնդակ:

Յերբ դասատուն խաղն սկսելու ագգանշանը տալիս է, սկյուռը շատ զգույշ քայլերով անց ու դարձ անելով խաղացողների միջով, ընկույզն զգուշությամբ դնում է մեկի ասի մեջ:

Ընկույզ ստացողն անմիջապես վեր է թռչում տեղից և սկսում հալածել սկյուռին, վորն ազատվում է այն ժամանակ, յերբ հասնում և նստում է իր տեղը:

Դերերը փոխվում են այն դեպքում, յերբ սկյուռը խիում է փախչողին, նախքան իր տեղը հասնելը:

Սաղի ժամանակ խաղացողները պետք է գլուխները չբարձրացնեն:

Յեթե խաղացողները շատ են, կարելի յե սկյուռները թիվը 2-ի հասցնել:

Այս խաղը զարգացնում է յերեխայի ուշիմությունը և արագաշարժությունը:

## 41. ԱՐԱԳ ՆԿԱՐԵԼ

Սաղացողներ՝ 15—40 հոգի:

Սաղավայր՝ դսես, հրապարակ, դասարան:

Սաղացողները բաժանվում են 5 հոգուց բաղկացած ողակների:

Հատակի վրա քաշում են մի գլիծ: Ողակները կանգնում են գծի վրա, ծոծրակով շարված:

Գծից 5—15 քայլ հեռավորության վրա (նայած խաղավայրի տարածության) յու-



րա քանչյուր ողակի դիմաց, դրվում է մեկական սեղան, վորոնց վրա պետք է դրված լինեն մաքուր թուղթ և մատիտ: Սաղի նպատակն է տուն նկարել:

Խաղն սկսելու ազդանշանի վրա, բոլոր ողակների առաջին խաղացողներն արագ վազում են սեղանի տակով անցնում հակառակ կողմը և թղթի վրա նկարում մի քառակուսի, կրկին վերագառնում իրենց տեղերը: Յերկրորդ խաղացողները գնում են այդ քառակուսիների մեջը նկարում դուռ:

Յերրորդ խաղացողները՝ պատուհան, չորրորդ խաղացողները՝ տանիք, հինգերորդ խաղացողները՝ ծխնելույց:

Վոր ողակն ամենից արագ և մաքուր նկարի տունը, նա յեւ տանում է խաղը:

### ԽԱՂԻ ՈՐԵՆՔՆԵՐԸ

1. Բոլոր վազողների համար պարտազիր է սեղանի տակից անցնել մյուս կողմը, նկարել և կրկին սեղանի տակից անցնելով վազել իր տեղը:

2. Հաջորդ խաղացողն իրավունք չունի վազելու, քանի դեռ մյուս խաղացողն իր տեղը չի վերագարձել:

3. Յուրաքանչյուր խաղացող միայն տան մի մասն է նկարում:

4. Հաղթանակը վորոշվում է արագությամբ և նկարի մաքրությամբ:

Յեթե արագության մեջ մի ողակն է շահել, բայց տունը ճիշտ չէ նկարել, այդ դեպքում շահողը դառնում է այն ողակը, վորը համեմատաբար ուշ է յեկել, բայց նկարը մաքուր և ճիշտ է կատարել:

Խաղի նպատակն է յերեխաներին կուլեկտիվ կերպով նկարել սովորեցնել:

Պարտադիր չէ անպայման տուն նկարել: Կարելի յէ և ուրիշ առարկաներ:

### 42. ՊԱՏԻ ԽԸՌ

Խաղացողներ՝ 10—15 հոգի:

Խաղավայր՝ դաւս, հրապարակ, դասարան:

Խաղացողները կանգնում են պատի մոտ և աջ ձեռքը կպցնում պատին:

Խաղի ղեկավարը հանկարծ կանչում է.

«Պատի խըս»:

Խաղացողներն անմիջապես պզզում են: Ուշ պզզողը դառնում է խաղն սկսողը:

Խաղ սկսողը կանգնում է խաղացողների կենտրոնում, իսկ մյուսները նրա աջ ու ձախ կողմի վրա շարվում են պատի մոտ, աջ ձեռքը պատին կպցրած:

Սաղացողներն աշխատում են բարկացնել խաղ սկսողին, կպչելով նրան, մի կողմից մյուս կողմը վազելով:

Սաղն սկսողն աշխատում է նրանց խրվել այն դեպքում, յերբ նրանց ձեռքը պատին կպած չի:

Հաջողվելու դեպքում խփվողը դառնում է խաղ սկսող:

### 43. ՔԱՐԱՐՁԱՆ

Սաղացողներ՝ 10—30 հոգի:

Սաղալայր՝ դաս, հրապարակ:

Սաղացողները կազմում են շրջան: Ղեկավարը հետևյալ վանկերով փորձում է, թե ով է լինելու խաղն սկսողը:

Ա նի Բ ա նի Բ ա ը ա բ ա նի,

Յե խըլ մ ու ժիկ ն ա բ ա ը ա նե,

Տ ու, տ ու, ս կ ա ժի,

Տ ը ի կ ա պ եյ կ ի ս պ ա չի:

Վոր խաղացողի վրա «չի» մասնիկն ընկավ, նա դառնում է խաղն սկսող:

Սաղն սկսողը բարձրաձայն հայտարարում է. «Սաղն սկսված է»:

Բոլոր խաղացողներն սկսում են փախ-

չել և յերբեմն, խաղ սկսողին բարկացնելու համար, վազում են, նրա մոտից անցնում, յերբեմն թեթև հարվածում կրնանակին:



Սաղն սկսողը հաղածում է խաղացողներին աշխատելով խփել նրանց:

Սփվողներն անմիջապես ձեռները կողմ տարածելով, քարի արձան են դառնում:

Քարարձանները վաղելու և շարժվելու իրավունք չունեն, մինչև փոր ընկերներից մեկը չխփի իրենց:

Սաղի նպատակն է բոլոր խաղացողներին քարարձան դարձնել:

Յեթե խաղացողները շատ են, այդ

դեպքում խաղն սկսողներին թիվը պետք է ավերացնել:

Սաղը զարգացնում է յերեխաների վազելու, վտանգից խուսափելու և արագաշարժ լինելու ունակությունները:

#### 44. Հ Ա Ղ Յ Ո Ղ Շ

Խաղացողներ՝ 5—15 հոգի:

Խաղավայր՝ դաշ, հրապարակ, դառաբան:

Խաղացողները շրջան են կազմում:

Բոլորը, բացի մեկից, իրենց կանգնած տեղում քաշում են փոքրիկ շրջան և կանգնում մեջը:

Սաղի դեկավարը հրահանգում է: «Շարվիր»:

Բոլորը դուրս են գալիս իրենց շրջաններից և շարվում շրջանակ չունեցող խաղացողի յեակը:

Խաղացողներն սկսում են նվագակցությամբ քայլել շրջանների վրայից:

Նվագը դադարելիս խաղացողներն անմիջապես աշխատում են կանգնել շրջաններում:

Ով առանց շրջանի մնաց, դուրս է գալիս խաղից:

Սմեն անգամ խաղից դուրս յեկողի հետ միասին, ջնջում են մի շրջան այն հաշվով, փոր միշտ խաղացողների թիվը մեկով ավելի լինի շրջաններից:

Հաղթում է նա, ով մնում է վերջին շրջանում կանգնած:

Նվագելու հարմարություններ չլինելու դեպքում, խաղը կարելի յե կատարել սուլիչի, ծափի տակ:

#### 45. Լ Ո Ջ ՈՒՆ Գ Ն ԵՐ

Խաղացողներ՝ 12—24 հոգի:

Խաղավայր՝ դաշ, հրապարակ:

Խաղացողները բաժանվում են մի քանի հավասար թվով խմբակների: Խմբակները կանգնում են նշանակված գծի վրա, իրարից մի մետր հեռավորությամբ, իրար ծոծրակի շարված:

Նշանակված գծից 15—25 մետր հեռավորության վրա, յուրաքանչյուր խմբակի

զիմաց, գետնին դրվում է մի աման, կամ կավիճով նշանակվում են քառակուսիներ:

Քառակուսիների կամ ամանների մեջ լցնում են վորևե լողունգի տառեր, որինակ «ՀԱԳՈՒՍՏԴ ՄԱՔՈՒՐ ՊԱՀԻՐ»:



Լողունգի տառերը պետք է կտրատված և փակցված լինեն կարտոնի վրա:

Յերբ ամեն ինչ պատրաստ է, դասատուն ազդանշան է տալիս:

Շարքերի առաջիններն արագ վազում են, իրենց ամանից գտնում և հանում լողունգի առաջի տառը, դնում ամանի մոտ, գետնի վրա և վազում յետ, ձեռքը խափում հաջող խաղացողին:

Այսպես յուրաքանչյուր հերթական վազող, հանում է հերթական տառը և շարում գետնի վրա, մինչև վոր լողունգը լրանա:

Վոր խումբն առանց սխալի ամենից շուտ լողունգը շարի, այն խումբն էլ շահում է խաղը:

Այս խաղը զարգացնում է յերեխայի տեսողության և դատողության ունակությունները:

Այլևլի փոքրահասակների համար լողունգի փոխարեն կարելի յե տալ պարզ բառեր, վորոնց տառերը յերեխաներն արդեն սովորել են:


46. ԹՈՒՆԱՎՈՐ ՈՁ

Խաղացողներ՝ 5—20 հոգի:

Խաղաձայր՝ դաս, հրապարակ:

Հասակի վրա դրվում է մի քանի բու-  
լավա, մեկը մյուսից 1-2 վտանաչափ հե-  
ռավորության վրա:

Խաղացողներն իրար ձեռքերից բը-



նած, շրջան են կազմում բուլավաների  
շուրջը:

Ազդանշան տրվելուն պես, խաղացող-

ներն իրար ձգում են բուլավաների վրա:  
Բուլավա գցողները դուրս են գալիս  
խաղից:

Հաղթում է վերջին գույքը:

Այս խաղը զարգացնում է յերեխայի  
դիմադրողական կարողությունները:

47. Թ Ա Կ Ա Ր Դ

Խաղացողներ՝ 10—20 հոգի:

Խաղաձայր՝ դաս, հրապարակ, դահլիճ:

Գետնի վրա քաշել մի մեծ շրջագիծ



1 ու կեսից—2 մեար շառավիղով:

Սաղացողները կանգնում են դրսի շրջագծի վրա իրար ձեռքից բռնած:

Սաղն սկսելու ազդանշանը արվելուն պես, առանց ձեռքերն իրարից անջատելու, պետք է իրար ձգել շրջագծի մեջ:

Նրանք, ովքեր կորցնում են իրենց հավասարակշռությունը և ընկնում շրջագծում, գուրս են գալիս խաղից:

Սաղացողների թիվը վորքան քշանում է, այնքան շրջագիծը փոքրացնում են:

Սաղը շահում է այն գույգը, վորը մնում է վերջում:

#### 48. ՂԵԿԱՎԱՐԻ ՅԵՏԵՎԻՑ

Սաղացողներ՝ 40 հոգի:

Սաղավայր՝ դասարան, դահլ, հրապարակ:

Սաղացողները կազմում են մեծ շրջան, յուրաքանչյուրն իրարից կես քայլ հեռու:

Շրջագծում կանգնողները, բացի ղեկավարից, իրենց վոտերի մոտ քաշում են փոքր շրջան և կանգնում մեջը: Ղեկավարն ազդանշան է տալիս և սկսում ծուռ ու մուռ վազել խաղացողների միջից, ձեռքով

խիում խաղացողին և ասում, «Հետևիր ղեկավարին»:

Ղեկավարը քայլի կամ վազքի ժամանակ կատարում է մարզական շարժումներ, մյուսներն ընդորինակում են ղեկավարի կատարածները: Յերը ղեկավարը հանկարծ կանչում է, «Շտապեցե՛ք տեղներդ», բուր խաղացողները վազում, մտնում մի շրջագծի մեջ:

Ով վոր մնում է առանց շրջագծի, դառնում է ղեկավար:

Սաղի նպատակն է յերեխաներին սովորեցնել ճարպիկություն, արագաշարժություն:

#### 49. ՈՂԱԿԸ ՓԱԽՑՐՈՒ

Սաղացողներ՝ 10—30 հոգի:

Սաղավայր՝ դասարան, դահլ, հրապարակ

Սաղացողները կազմում են խիա շրջան, ապա վերցնում են մի պարան, մեջն անցկացնում մի ողակ և պարանի ծայրերն իրար ամուր կապում:

Պարանն առնում են շրջանի մեջ և յուրաքանչյուր խաղացող յերկու ձեռքով

բռնում ե պարանը ձեռքերը կռուփ կազմած:

Մեկն ընտրվում ե խաղ սկսող և կանգնում շրջանի կենտրոնում:

Սաղն սկսելիս խաղացողներն իրենց ձեռքերը տանում-բերում են պարանի վրա և միևնույն ժամանակ ողակը սլացնում ձեռները միջոցով իրար, իսկ խաղն սկսողն աշխատում ե բռնել ողակը:

Ում ձեռքի մեջ ողակը բռնվեց, նա տեղը փոխում ե խաղն սկսողի հետ:

Այս խաղը պահանջում ե ձեռքերի արագաշարժություն և լարված ուշադրություն:

### 50. ՔԱՄԻՆ ՈՒ ԾԱՂԻԿՆԵՐԸ

Խաղացողներ՝ 20—50 հոգի:

Խաղավայր՝ դահլիճ, հրապարակ:

Սաղին մասնակցողները բաժանվում են յերկու հավասար մասերի, ապա վիճակ են գցում իրար մեջ, թե վոր մասը պետք ե լինի ծաղիկներ և վոր մասը քամիներ:

Սաղադաշտի կենտրոնում քաշում են մի ուղիղ գիծ: Քամիները կանգնում են այդ գծի վրա շարքի լայնությամբ: Ծա-

ղիկները գնում են իրենց համար նշանակված սահմանը, քամիներից 20-ից 30 մետր հեռավորության վրա, գաղտնի կերպով ընտրում են մի ծաղիկի անուն, վազում քամիների մոտ և ձեռները վեր բարձրացրած, ասում. «Բարև ձեզ քամիներ»:

Քամիները պատասխանում են. «Բարեվ ձեզ: Ովքեր եք դուք»: Ծաղիկները



պատասխանում են. «Մենք դաշտի, անտառի, այգու ծաղիկներ ենք»: Այս դեպքում քամիներն աշխատում են թվել տվյալ միջավայրի ծաղիկների անունները:

Յեթե տրվեց ծաղիկների ընտրած ա-

նունը, բոլոր ծաղիկներն անմիջապես  
փախչում են իրենց սահման, իսկ քամի-  
ները հետապնդում են և բռնված բոլոր  
ծաղիկներին ավերացնում իրենց թվին:

Ծաղիկները կրկին մի նոր անուն են  
ընտրում և վերադառնում:

Այս կերպ խաղը շարունակվում է  
մինչև վոր բոլոր ծաղիկները բռնվեն: Յե-  
թե քամիները շատ ծաղիկների անուններ  
թվելուց հետո (քանակի մասին խաղա-  
ցողները նախապես պիտի պայմանավոր-  
վեն), վորոշված ծաղիկի անունը չեն գրա-  
նում, այդ դեպքում իրենցից յերկու կամ  
յերեք հոգի տալիս են ծաղիկներին, վոր-  
պես տուգանք: Այն ժամանակ ծաղիկներն  
իրենց ընտրած անունը հայտնում են և  
առանց հետապնդվելու վերադառնում ի-  
րենց սահմանը՝ նոր անուն ընտրելու:

## 51. ԱՐՁԻՆ ՇԱՐՎԱԾԵԼԸ

Խաղացողներ՝ 10—20 հոգի:


Խաղավայրը՝ դասարան, դահլ, հրապարակ:

Պետք է սյունին կապել մեկ կամ մեկ  
ու կես մետր յերկարությամբ պարան:

Խաղացողներից մեկն ընտրվում է արջ:

Արջը բռնում է սյունից կապված պա-  
րանի ծայրը և հայտարարում խաղը սկըս-  
ված:

Խաղացողները աշխատում են ձեռքով  
հարվածել արջին և փախչել, իսկ արջը,  
մի ձեռքով պարանի ծայրը բռնած, աշ-  
խատում է պաշտպանվել հարվածներից  
և միևնույն ժամանակ հարմար առիթի յե  
սպասում (առանց պարանը բաց թողնե-  
լու), խիել հարվածողներին:



Խփվողը գառնում է արջ:

Այս խաղը զարգացնում է յերեխայի  
պաշտպանվելու և վտանգից խուսափելու  
ունակությունները:

# IV. 9—11 ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

52. Կ Ե Գ Լ Ի

Խաղացողներ՝ 10—20 հոգի:

Խաղալիքներ՝ դսոս, հրապարակ, դահլիճ:

Խաղացողները բաժանվում են հավասար թվով յերկու խմբի:

Խմբերը կանգնում են հասակի վրա քաշված գծի մոտ, ծոծրակով շարված:

Խաղի ղեկավարն իր մոտ գրում է յերկու խմբերի յերեխաների անունները: Ապա վերցնում է յերեխաների համար պատրաստված կեզլին և գծից 6—10 մետր հեռավորության վրա դասավորում գետնին:

Ամենից առաջ իրարից մի քանի սանտիմետր հեռավորությամբ մի գծի վրա տնկում է 4 կեզլի, ապա նրանց միջանցքների ուղղությամբ ղեպի առաջ, անկում է 3 կեզլի, հետո 2, ապա 1 կեզլի ամենից առաջ:

Այսպիսով ստացվում է մի յեռանկյու-

նի, սուր ծայրը ղեպի խաղացողներն ուղղված:

Խաղն սկսված է համարվում, յերբ դասատուն կանչում է խաղացողների անունները:



Կանչվողը մոտենում է գծին, ուղիղ կեզլիի սուր ծայրի ուղղությամբ, մեկ վտարը դնում է գծի վրա, քիչ կռանում է ղեպի առաջ, վերցնում կեզլիի փայտ է փոքր գնդակը և ձեռքը յետ ու առաջ տանել-բերելով, գլորում է գնդակը, ղեպի կեզլիները:

Ընկած կեզլինների քանակությունը  
գրանցվում է նրա անվան դիմաց:

Այսպես հերթական կարգով բոլոր խա-  
ղացողները մասնակցում են խաղին:

Վերջում դասատուն գումարում է բո-  
լոր թվանշանները ու հայտնում, թե վոր  
խումբն է շահել:

Շահում է այն խումբը, վորն ավելի  
շատ թվանշան է շահել:

Կեզլինների գնդակները սովորաբար 3  
հատ են լինում, այնպես, վոր յուրաքան-  
չյուր խաղացող իրավունք ունի մի ան-  
գամից 3 գնդակ արձակելու:

### 53. ԽՈՒՍԱՓԻՐ ԳՆԴԱԿԻՑ

Խաղացողներ՝ 20—40 հոգի:

Խաղալայր՝ դաւոս, հրապարակ:

Խաղացողներն իրենց միջից մեկին  
ընտրում են, վորպես խաղ սկսող:

Խաղն սկսողը վերցնում է բասկետբո-  
լի կամ վալեյբոլի մի գնդակ և կանգնում  
դաշտի կենտրոնում:

Մնացած բոլոր խաղացողները ցրվում  
են դաշտում, իրարից բավական հեռավո-

րության վրա: Սմեն մեկն իր կանգնած  
տեղում փորում է մի փոս, կամ մի քար  
է դնում, վորպես տուն:

Խաղ սկսողը յերբ տեսնում է, վոր բո-  
լորն էլ տուն ունեն, կանչում է. «Խաղն  
սկսված է»:

Խաղացողներն աշխատում են իրենց  
տները մեկը մյուսի հետ փոխել, արագ  
վազելով մեկ տնից մյուսը:

Այս միջոցին խաղ սկսողն աշխատում  
է ձեռքի գնդակով խփել փախչողներից  
մեկն ու մեկին:

Հաջողվելու դեպքում դերերը փոխ-  
վում են և կրկին շարունակում խաղը:

Ճարպիկ խաղացող համարվում է նա,  
ով իր տունն արագ է փոխում, և ամբողջ  
խաղի ընթացքում չի խփվում:

Գնդակից խուսափելու համար, պետք  
է տափել, ծռվել, վեր թռչել: Մի խոսքով  
ճարպիկ շարժումներ կատարել:

Այս խաղը զարգացնում է ճարպիկու-  
թյուն և կողմնորոշելու ըմբռնողություն:

Խաղացողներ՝ 10—30 հոգի:

Խաղափայր՝ դաս, հրապարակ, դահլիճ:

Խաղացողները կազմում են շրջան:

Մեկն ընտրվում է, փորպես խաղ սկսող, և կանգնում շրջանի կենտրոնում:

Խաղ սկսողի աչքերը կապում են մաքուր թաշկինակով կամ մաքուր շորով, և ձեռքը մի մետրի չափ բարձրություն ունեցող գավազան տալիս:

Նա գավազանով 2 անգամ խփում է գետնին, փորպես խաղն սկսելու ազդանշան:

Խաղացողներն ազդանշանից անմիջապես հետո, դառնում են դեպի աջ կամ ձախ, և քայլում շրջանում, յերգելով կամ զանազան ֆիզիկուլտ շարժումներ անելով:

Քայլքի ժամանակ խաղ սկսողը կրկին ձեռքի գավազանով 3 անգամ խփում է գետնին և գոչում «ՀՈՓ»:

Խաղացողները «ՀՈՓ»-ը լսելով, անմիջապես յերեսով դառնում են դեպի խաղ սկսողը: Վերջինս ձեռքի գավազանը մեկնում է դեպի խաղացողները:

Գավազանի ուղղությամբ կանգնած

խաղացողը բռնում է գավազանի ծայրից և սկսում զանազան կենդանիների ձայներ հանել:

Աչքերը կապած խաղ սկսողն աշխատում է իմանալ թե ով է ձայն հանողը: Յեթե առաջին անգամ չկարողացավ իմանալ, կամ կասկածի մեջ ընկավ, կարող է պահանջել, փոր մի անգամ ևս կրկին: Յեթե այս անգամ ել չկարողացավ իմանալ, խաղացողները կրկին սկսում են քայլել շրջանում, մինչև կանգնելու ազդանշանը տրվի:

Այսպես շարունակվում է խաղը մինչև փոր խաղացողներից մեկի անունը գտնի:

Այս խաղը զարգացնում է յերեխայի հիշելու, արամաբանելու ունակությունը:

55. ԻՆՁ Ե ՊԱԿԱՍՈՒՄ

Խաղացողներ՝ 5—20 հոգի:

Խաղափայր՝ դասարան, հրապարակ:

Խասատուն, յերեխաների բացակայությամբ, սեղանի վրա դնում է 6—10 զանազան իրեր—խաղալիքներ, գիրք, մատիտ, բաժակ և այլն:

Յերբ ամեն ինչ պատրաստ է, կան-

չում ե յերեխաներին սեղանի մոտ և մի  
րոպե ժամանակ ե տալիս, վոր սեղանի  
վրա յեղած իրերը լավ գիտեն:

Փամանակը լրանալուն պես, յերեխա-  
ները կրկին կես ըոպեյով դուրս են ու-  
ղարկվում և սեղանի վրայից վերցնում  
մի քանի իր, մնացածների դասավորու-  
թյան ձևն ել փոխում:

Յերեխաները գալիս են ներս և ուշա-  
դրությամբ գիտում սեղանի վրայի իրերը:

Ովքեր իմացան սեղանից վերցրած  
իրերի անուններն ու քանակը, նրանք  
հանդիսանում են ուշադիր մկնիկներ:

Ամեն անգամ խաղը նոր սկսելիս, սե-  
ղանի վրայի իրերը պետք ե մեծ մասամբ  
փոխել:

Յեթե խաղացողները 5—6 տարեկան  
են, իրերի դասավորությունն ու ձևը չի  
փոխվում:

Այս խաղը զարգացնում ե յերեխայի  
տեսնելու և հիշելու կարողությունները:

Խաղացողներ՝ 10—20 հոգի:

Խաղափայր՝ ակումբ, հրապարակ, դահլիճ:

Խաղացողներից մեկի աչքերը կապում  
են մաքուր թաշկինակով ու կանգնեցնում  
խաղասենյակի կենտրոնում:

Մյուս խաղացողները հավաքվում են  
խաղ սկսողի շուրջը և աջ ձեռքերը դնում  
նրա ուսերին:

Պահն սկսողն ասում ե. «Տալիս եմ  
ձեզ 3, 4, 5 քայլ», կամ ավելի, յեթե տե-  
ղի հարմարությունները ներում են:

Խաղացողներն անմիջապես վերցնում  
են ձեռները նրա ուսերից և անում այն-  
քան քայլ, վորքան տրված ե:

Յերբ բոլորն իրենց քայլերն արել,  
վերջացրել են, խաղն սկսողը կանչում ե.  
«Լիճը խաղալ ե»:

Խաղ սկսողն սկսում ե առաջանալ և  
բռնել խաղացողներից մեկն ու մեկին:  
Խաղացողներն իրավունք չունեն իրենց  
տրված քայլից ավելին անելու կամ փախ-  
չելու, յերբ խաղ սկսողը մոտենում ե ի-  
րենց: Նրանք կարող են պզգել, պառկել

և այլ ավելորդ քայլ անել տեղում, բայց մի վտար պետք է մնա նախկին տեղում: Սաղը չափազանց հետաքրքրական է դառնում այն ժամանակ, յերբ խաղացող-



ները ձայներ են հանում և խաղ սկսողին բերում իրենց մոտ, ու միաժամանակ ճարպիկ շարժումներ կատարելով խուսափում են բռնվելուց:

Բռնվողները դառնում են խաղ սկսող և սկզբի ձևով շարունակում խաղը:

Այս խաղը զարգացնում է ճարպիկություն և կողմնորոշում:

Այս խաղին կարող են մասնակցել 2—10 հոգի:

Սաղացողները բաժանվում են յերկու հավասար խմբի:

Սաղի համար անհրաժեշտ են սեղան, յեռոտանի, մի փոքրիկ զանգակ, վորը կախվում է յեռոտանու մեջտեղից, յերկու գնդակներ և բահեր: Գնդակները և բահերի կեսը պիտի լինի կարմիր, իսկ կեսը՝ կապույտ:

Սաղացողները վերցնում են բահերը և խփում գնդակներին, ամեն մեկն իր գույնին:

Յեռոտանին դրվում է սեղանի մեջտեղում:

Կարմիրները խաղն սկսում են սեղանի աջ անկյունից, իսկ մյուսները՝ ղիմացից:

Սաղի ընթացքում գնդակները կանգնեցնել և գանգի դեմ ուղղել չի կարելի պետք է կարուկ և ուժեղ հարվածել:

Յուրաքանչյուր խմբի նպատակն է գանգին շատ անգամ հարվածել:

Ամեն անգամ, յերբ գանգը ձայն է

հանում, հարվածը կրկնելու իրավունք ունի հարվածողը:

Չանգի ամեն մի ձայնը, մի աչոկ են հաշվում:

Յերբ գնդակը կաշում է յեռոտանուն, վերցնում են գնդակը, դնում սեղանի մի անկյունում, և նորից սկսում խաղը, նույն կարգով:

Հաղթողը նա յե լինում, ով առաջինն է 15 աչոկ շահում:

### 58. ԹԱԿԱՐԴՆ ԸՆԿԱԾ ԱՂՎԵՍԸ

Խաղացողներ՝ 10—25 հոգի:

Խաղալայր՝ դաս, հեռավարակ:

Խաղացողները կազմում են շրջան, իրար ձեռքերից բռնած: Նրանցից մեկը ընտրվում է վորպես աղվես:

Աղվեսը կանգնում է շրջանի կենտրոնում: Յերբ խաղի ղեկավարը հայտարարում է «ԽԱՂՆ ՍԿՍՎԱԾ Ե», աղվեսն աշխատում է կտրել շրջանի շղթան կամ թևերի տակից անցնելով՝ փախչել:

Խաղացողներն այս գեպքում թողնում են իրենց ձեռքերը և սկսում հալածել աղվեսին, միաժամանակ զգուշանալով նրա խորամանկութունից:

Աղվեսը, վազքի ընթացքում, հանկարծ յետ է դառնում և աշխատում է բռնել իրեն հետապնդողներից մեկն ու մեկին:

Խաղացողները կարող են պաշտպանվել աղվեսից միայն այն ժամանակ, յերբ փախչում են յետ, մինչև իրենց սահմանը, կամ սլալում գետնին:

Աղվեսը պաղտղներին և սահմանը հասնողներին բռնելու իրավունք չունի:

Դերերը փոխում են այն դեպքում, յերբ աղվեսը խփում է մեկին նախքան սլալելը, կամ սահմանին հասնելը:

Խաղը վարգացնում է յերեխայի վազելու, խոսափելու, կողմնորոշվելու և պաշտպանվելու ունակութունները:

### 59. ԾԻՏԸ ԾԱՌԻՆ

Խաղացողներ՝ 10—20 հոգի:

Խաղալայր՝ կանաչ դաս:

Խաղացողները հավաքվում են ղեկավարի շուրջը:

Ղեկավարը հանկարծ կանչում է. «Ծիտը ծառին»:

Բոլոր խաղացողներն անմիջապես ընկ-

նում են մեջքի վրա և վտանները ցցում ուղում: Այն խաղացողը, վորն ուշանում է, դառնում է խաղ սկսող:

Խաղ սկսողն աշխատում է մեկնումեկին խփել: Նա ուշադրությամբ ման է գալիս վտաններն ողում ցցված խաղացողներին մեջ, իսկ խաղացողներն աշխատում են հարմար ժամանակին վեր կենալ և փախչել:



Այն խաղացողները, վորոնք ազատվում են, աշխատում են մոտենալ խաղ սկսողին և նրա ուշադրությունը գրավել, առիթ ստեղծել, վոր խաղ սկսողը վագի իրենց յետևից, վորպեսզի մյուս ընկերներն ազատվեն:

Նա, վորին խփեց խաղ սկսողը, նախքան գետին ընկնելը և վտանները վերև ցցելը, դառնում է խաղ սկսող և խաղը շարունակվում է:

## 60. ՉԱԼԻԿ-ՄԱԼԻԿ

Խաղացողներ՝ 5—10 երգի:

Խաղավայր՝ դառ, հրապարակ:

Խաղացողներից մի գույգ դառնում են մայրեր, իսկ մյուսները հալա-հալա յեն գալիս:

Յերը խաղացողները բաժանվել են յերկու մայրերի վրա հավասար թվով, մայրերը թաց-չոր են գցում, վորոշելու, թե վոր խումբն է լինում խաղ սկսողը:


Խաղ սկսողներն անցնում են մի կողմ, իսկ մյուսները, վորոնք չալիկ-մալիկներն են, գետնի վրա գծում են մի մեծ քառակուսի ու մտնում մեջը, հայտարարելով խաղն սկսված:

Խաղ սկսողներից մեկ կամ յերկու հոգի, վտանքի վրա թռչելով մտնում են քառակուսու մեջ և աշխատում առանց վտանները գետնին դնելու, խփել չալիկ-մալիկներին:

Խփվողները դուրս են գալիս խաղից և այդ հերթի խաղին չեն մասնակցում:

Դուրս են գալիս խաղից նաև խաղ սկսողներից նրանք, ովքեր քառակուսու մեջ հոգնելով, վոտը գետնին են դնում, և չալիկ-մալիկներին այն խաղացողները, վորոնք փախչելիս վոտները քառակուսուց դուրս են դնում:

Խաղի նպատակն է՝ բոլոր չալիկ-մալիկներին խփել, մի վոտի վրա թռչելով:



Այն դեպքում, յերբ խաղ սկսողներից յերկուսը չկարողացան քառակուսու մեջ մեկ վոտի վրա կանգնել, նրանց փոխարինելու գնում են իրենց մյուս ընկերները:

Չալթվող կողմը դառնում է չալիկ-մալիկներ:

Այս խաղը զարգացնում է յերեխաների խուսափելու, դիմադրելու և դժվարությունների տոկալու ունակությունները:

61. Ճ Ա Մ Բ Ա Ր

Խաղացողներ՝ 10—40 հոգի:

Խաղալայր՝ անտառ, հրապարակ, դահլիճ:

Խաղի դեկավարը հանդիսանում է ճամբարի պետը:

Նա հավաքում է յերեխաներին և սկսում բացատրել ճամբարի կյանքն իր հիմնական գծերով:—

1. Առավոտյան լիցք:
2. Լվացում ու շփում:
3. Թեյ:
4. Խաղեր և եքսկուրսիաներ:
5. Արևի վաննա, լող և ողային վաննա:
6. Աղատ զբոսանք:
7. Ճաշ:
8. Մեռյալ ժամ:
9. Շարժական խաղեր, պարեր, յերգեր, արտասանություն և զանազան զվարճալիքներ:

10. Խարույկ:

11. Սանիտարական ստուգում:

12. Քուն:

Բացատրելուց հետո յերեխաներից նշանակում ե ճամբարի բժիշկ, ֆիզկուլտ-հրահանգիչ, կուլվար, պարի ուսուցիչ, սանիտար կամ քույր, ուսուցիչ և խոհարար:

Իրանից հետո, բոլոր խաղացողները, բացի պետից, խմբերով ցրվում են դաշտում:

Մեքերը ներկայացնում են առանձին վրաններ: Ֆերեխաները պառկում են գետնին և քնում:

Քիչ հետո պետի կողմից տրվում ե արթնանալու ազդանշան:

Խաղացողներն սկսում են արթնանալ և վազել հրապարակի կենտրոնը՝ առավոտյան լիցքն անելու:

Ֆիզկուլտ-հրահանգիչը սուլում ե և գոչում «Շարվիր»:

Բոլորը շարվում են և կատարում առավոտյան լիցքը: Բժիշկը և շտաբի պետը դիտում են լիցքը:

Ֆիզկուլտ-հրահանգիչը լիցքը վերջացնում ե և սուլում: Խաղացողները վա-

ում են դեպի լվացարանները և սկսում լվացվելու և շիվելու գործողություններ կատարել:

Իրանից հետո գնում են անկողինները հարթում և հավաքվում դրոշակի մոտ:

Ճամբարի պետը մոտենում ե դրոշակին, պատվի առնում և ասում.

— Բարեվ ձեզ, պիտներներ:

Բոլորը միասին գոչում են.

— Բարեվ:

Պետը կարգում ե որվա ռեժիմը և վերջացնելուց հետո հրահանգում.

— Պատվի սո:

Բոլորը պատվի յեն առնում և յերգում «ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼԸ»:

Իրոշակը դանդաղ բարձրանում ե:

Իրոշակը բարձրանալուց հետո, պետն ասում ե.

— Պիտներներ, այսօրվա ճամբարի ռեժիմը կատարելու պատրաստ եք:

Բոլորը միաբերան պատասխանում են.

— Միշտ պատրաստ ենք:

Տրվում ե թեյելու ազդանշանը: Բոլորն շապում են դեպի ճաշարան և նըստում: Մի քանիսը գնում են ճաշարանից թեյ, հաց բերում դնում սեղանի վրա:

Բժիշկը և ճամբարի պետը շրջում են և հսկում, վոր յերեխաներն ուտելիս լավ ծամեն, հանգիստ խմեն, չաղմկեն և այլն:

Յերեխաներն սկսում են թեյ խմել, կարագ քսել հացին, ձու շարդել և այլն:

Քիչ հետո, կուլվարը գիմում է յերեխաներին ստելով.

— Պիտներներ, թեյից հետո բերաններդ վողողեցեք և պատրաստվեցեք խազալու և եքսկուրսիա գնալու: Սաղացողները թող գնան Փիղկուլա-հրահանգչի մոտ, իսկ եքսկուրսիայի գնացողներն ինձ հետ գան:

Յերեխաները բաժանվում են 2 մասի. մի մասը Փիղկուլա-հրահանգչի հետ կազմակերպում են գանազան շարժական խազեր, մյուսները կուլվարի հետ գնում են եքսկուրսիայի, կատարելով թիթեռներ բռնելու, քարեր հավաքելու և այլ շարժումներ:

Սպա հավաքվելու ազդանշան է տրվում:

Յերեխաները կամաց-կամաց հավաքվում, մտնում են վրանը, շորերը հանում, գլուխները կապում սպիտակ շորով, շարք կանգնում և գնում արևի և ոգի վաննա-

ներ ընդունում: Յերեխաները պառկում են փորի վրա: Յուրաքանչյուր 2 րոպեն մի անգամ, բժիշկը կարգադրում է յերեխաներին դիրքերը փոխել, շրջվել մեջքի, աջ կողքի վրա և այլն:

Հետո բժիշկը, քույրը և Փիղկուլա-հրահանգչի յերեխաներին առաջնորդում են դեպի գետը, լողանալու:

Յերեխաներն փորն ի վար պառկում են մարգագետնի վրա և սկսում լողանալու շարժումներ անել, շուր ցանել իրար վրա և այլն:

Փիղկուլա-հրահանգչի սուլում է: Բոլորը դուրս են գալիս ջրից, հագնվում են և սկսում ազատ զբոսանքներ, զրույցներ կազմակերպել:

Ճամբարի պետը տալիս է ճաշի ազդանշանը:

Յերեխաները հավաքվում են և կատարում նույն շարժումները ինչ վոր թեյի ժամանակ:

Սպա յերեխաներն ազդանշանով գնում են բերանները վողողում, հետո հավաքվում իրենց վրաններում:

Սկսվում է մեռյալ ժամը: Քույրը և կուլվարը շրջում են վրանները և հսկում:

Ամեն մի շարժում զագարում է, միայն քույրն ու կովարը վստքի ծայրերի վրա զգուշ շրջում են:

Հետո տրվում է արթնանալու ազդանշանը:

Յերեխաները վեր են թռչում, վազում վազվելու:

Հվացվելուց հետո ինքնագործունեյության ժամն է:

Մի մասը վալեյբոլ է խաղում, մյուսն ուրիշ խաղ, մի ուրիշ խումբ զբաղված է ուղում ավիոմոդելներ բաց թողնելով, այստեղ արտասանություն, այնտեղ յերգ, պար: Ամենքն զբաղված են: Ճամբարի պետը, բժիշկը, կովարը, դասատուն, խոհարարը միանում են խաղացողներին:

Ազդանշանից հետո սկսվում է խաբույկը: Նստարանների մեջտեղում բոցավառվում է կրակը:

Բոլորը հավաքվում են ու նստում խաբույկի շուրջը:

Շարունակվում է ինքնագործունեյության ժամը: Արտասանում են, յերգում, պարում, հանելուկներ ասում, զվարճանում:

Ուսուցիչը պատմում է հետաքրքրա-

կան պատմություններ, հեքիաթներ և այլն:

Տրվում է դրոշակ եղեցնելու ազդանշանը:

Բոլորը հավաքվում են և շարք կազմում:

Քույրը կատարում է սանիտարական ատուգում, կովարն անփոփում է որվա կյանքը և կատարված հաջողություններն ու թերությունները: Բոլորը միասին յերգում են «ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԿ»:

Դրոշակը դանդաղ իջնում է:

Ճամբարը պատրաստվում է քնելու:

Այսպիսով խաղը վերջանում է:

Պաղի դեկավարը՝ ճամբարի պետը, պիտի աշխատի, վոր խաղի ընթացքում յերեխաները լինեն ուրախ—խոսեն, կատակեն և միաժամանակ հետաքրքրությամբ հետևեն բոլոր աշխատանքներին:

## 62. ՎՈՐՍՈՐԴ

Խաղացողներ՝ 10—20 հոգի:

Խաղավայրը՝ դաշտ, հրապարակ, դահլիճ:

Հատակի վրա մի ուղղությամբ դրվում են խաղացողների թվից մեկով պակաս աթոռներ:

Սաղացողները նստում են աթոռներին: Առանց աթոռի մնացողը հանդիսանում է վորսորդ:

Վորսորդն անցնում է խաղացողների առջևից և յուրաքանչյուրին տալիս է վորսորդին անհրաժեշտ իրերի անուշաներ, որինակ. դաշույն, պայուսակ, հրացան, փամփուշտ և այլն:

Ապա վորսորդը գիմում է խաղացողներին, ասելով.

— Վորսորդական իրերս պատրաստեցեք. վորսի եմ գնալու:

Այս ասելուց հետո սկսում է քայլել, թվելով վորսորդական իրերի անուշաները:

Ում անուշը վոր տրվում է, հետևում է վորսորդին:

Վորսորդն սկսում է վորս փնտրելու շարժումներ կատարել, վազել, հանկարծ պզզել, գետնի վրա սողալով առաջ շարժվել և այլն: Իրերը հետևում են նրա որինակին:

Վորսորդը հանկարծ սկսում է դանդաղ և լարված ուշադրությամբ մի քանի քայլ առաջ գնալ, շոգել գետնին, նշան բռնել:

Իրերը նույնն են անում:

Բնւմ, բնւմ: Վորքան կաքավ խփեցի, — գոչում է վորսորդը և սկսում փախչել դեպի աթոռները:

Իրերը նույնպես փախչում են և նրստում աթոռներին:

Ով մնաց առանց աթոռի, նա մի աթոռ վերցնելով դուրս է գալիս խաղից:

Սաղը շարունակվում է, մինչև մնա մի խաղացող:

Ճարպիկ վորսորդը, յերբեք խաղից դուրս չի գալիս:

Յեթե վորսորդը կտրվում է ու խաղից դուրս գալիս, ընտրում են նոր վորսորդ և շարունակում խաղը:

### 63. ՇԱՐՔԱԿՈՒՎ

Սաղացողներ՝ մինչեվ 30 հոգի:  
Սաղավայր՝ դասարան, դահլ, հրապարակ:

Իրարից 10 մետր հեռավորությամբ քաշում են յերկու զուգահեռ գծեր:

Այդ գծերի կենտրոնում գտնվող խաղադաշտը մի այլ գծով բաժանում են յերկու հավասար մասերի:

Սաղացողները բաժանվում են յերկու

հավասար խմբերի: Ա խումբը կանգնում  
է մի գծի վրա, իսկ Բ-ն՝ մյուս գծի:

Յերկու խմբերի խաղացողներն ել մրա-  
նում են իրար թև և յերեսները դարձնում  
դեպի կենտրոնը:

Դասատվի ազդանշանի համաձայն, յեր-  
կու խմբերն ել սկսում են քայլել մինչև



կենտրոնի գիծը: Մի այլ ազդանշանով  
սկսում են կրճքով իրար հրել:

Վոր կողմի խաղացողներին հաջողվեց  
կրճքով հրելով մյուսներին գծից այն կող-  
մը տանել, այն խումբն ել շահում է:

Խաղացողներ՝ մինչեվ 50 հոգի:

Խաղաձայր՝ դասարան, դահլ, հրապարակ:

Խաղացողներից յերկու հոգի նշանակ-  
վում են խաղ սկսողներ, իսկ մյուսները  
կազմում են մեծ շրջան:

Խաղ սկսողները մտնում են շրջանի



կենտրոնը: Մեկի աչքերը թաշկինակով կա-  
պում են և ձեռքը տալիս մի ժգուտ (կաշ-  
վի, դիմացկուն կտորից պատրաստված  
տուպրակ՝ լցված խոտով, կամ վոլորված  
թաշկինակ), իսկ մյուս խաղ սկսողին՝ սու-  
լիչ:

Ազդանշան տալիս, սուլիչ ունեցողը սու-

ելով վազվզում ե շրջանակում, իսկ ժգուտ ունեցողն աշխատում ե խփել: Յերբ նրան հաջողվեց խփել, յերկուսը միասին անցնում են խաղացողների մեջ և մի ուրիշ գույգ ե առաջ գալիս խաղ սկսելու:

Այս խաղը զարգացնում ե յերեխայի լսելու, դատելու և կողմնորոշելու ունակությունները:

### 65. ՎԵՐՁԻՆ ԶՈՒՅԳԵՐԸ ՓԱԽՉԵՆ

Խաղացողներ՝ 10—30 հոգի:

Խաղավայր՝ դառ, հրապարակ:

Խաղացողներին բաժանում են յերկու հավասար մասի և գույգ-գույգ կանգնում ծոծրակի ուղղությամբ, իրար յետև շարված:

Մեկը, վորպես խաղ սկսող, կանգնում ե գույգ շարքի առաջ, ձեռները բարձրացրած ծափ ե տալիս և ասում.— «Մեկ, յերկու, յերեք, վերջին գույգը փախչի»:

Այս ասելիս վերջին գույգը, մեկը կանգնած շարքի աջ կողմից, մյուսը ձախ կողմից, վազում են առաջ և աշխատում բաց տարածության վրա իրար հասնել և կրկին

գույգ կապել: Սակայն նրանց վազելուց հետո, խաղ սկսողը հետապնդում ե նրանց և աշխատում նախքան վազողներն իրար հասնելը մեկին խփել:

Յեթե հաջողվում ե, ապա նա խփվողի ընկերոջ հետ կազմում ե գույգ և գալիս կանգնում ե շարքի առաջ: Խփվողը դառնում ե խաղ սկսող և շարունակում ե խաղը:

Զույգերին կարելի յե տալ հերթական համարներ և ըստ ցանկության կանչել գույգերին:

### 66. ՀՈՎԻՎՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Խաղացողներ՝ 10—20 հոգի:

Խաղավայր՝ դառ, դասարան, հրապարակ:

Յերկուսին ընտրում են վորպես խաղը սկսողներ, մեկը՝ հովիվ, իսկ մյուսը՝ գայլ: Իոլոր մյուս խաղացողներն իրար յետևից բռնած, շղթայվում են հովվին:

Խաղն սկսելիս գայլն աշխատում ե բռնել շղթայի ծայրի վոչխարին, իսկ հովիվը ձեռները տարածած արգելք ե հանդիսանում: Գայլը վոր կողմը վոր շարժվում ե, հովիվն իր վոչխարներով նույն կողմն ե շարժվում:

Գայլի կողմից բռնված վոչխարները  
խաղից դուրս են գալիս:

Սաղն այգ կերպ շարունակվում է մինչև  
բոլոր վոչխարները բռնվեն:

Վոչխարներին իրարից պոկվել չի



թուլատրվում: Նման դեպքերում պոկ-  
վողները, թեկուզ լինեն մի քանի հոգի,  
համարվում են գայլի կողմից բռնված և  
դուրս են գալիս խաղից:

Այս խաղը զարգացնում է յերեխայի  
վազելու, խուսափելու, և կշռադատելու ու-  
նակությունները:

Խաղացողներ՝ մինչեվ 50 հոգի:

Խաղաձայր՝ դաս, հրապարակ:

Սաղացողները բաժանվում են զույ-  
գերի, վորոնցից մեկը լինում է առաջին  
համար, մյուսը՝ յերկրորդ:

Գասատուի ազդանշանի համաձայն,  
բոլորը միասին կազմում են մի մեծ շըր-  
ջան:

Սաղի հետաքրքրությունը պահպանե-  
լու համար, զույգերի առաջին և յերկրորդ  
համարները շըջան կազմելիս իրար մոտ  
չպիտի լինեն:

Գասատուն մեկին նշանակում է խաղ  
սկսող: Սա շըջանից դուրս է գալիս և շըր-  
ջանի չորս կողմը պտտվելով, արտասա-  
նում է.

Բարև, բարև,

Կարմիր արև.

Դե շուտ արի,

Գալի բարի,

Քեզ ենք սիրում,

Քեզ յենք յերգում:

Վերջին բառն արտասանելիս, վոր խա-

դացողի մոտ հասավ, խփում է մեջքին ու փախչում:

Միվողը և իր ընկերն իսկույն թողնում են շրջանն ու վազում նրա յետևից: Յեթե կարողացան խփել, նախքան վորոշված սահման հասնելը, փախչողը և խփողի ընկերը ձեռքերն իրար միացրած պատգարակի պես, խփողին նստեցնում են ու վերադառնում շրջանը:

Այս դեպքում խաղ սկսողը խփողն է լինում: Իսկ յեթե մինչև սահման հասնելը չկարողացան խփել, յերկու ընկերներով պիտի շալակեն թե՛ փախչողին և թե՛ նրա ընկերոջը և տանեն սահմանագծից մինչև շրջանը:

Այս դեպքում խաղ սկսողը մնում է իր դերում:

Սահմանագծի հեռավորությունը շրջանակից պետք է լինի 30—50 քայլ:

Խաղացողներ՝ 10—20 հոգի:

Խաղավայր՝ դաշտ, հրապարակ, անտառ:

Խաղացողներից մեկն սկսում է հետեվյալ վանկերով վորոշել թե ով պետք է խաղն սկսի:

Ենի մենի դոսի,

Դոսի սակլան բոսի,

Սակլան բոս, սակլան բոս,

Ֆրանգովսկի դոս:

Ում վրա «դոսն» ընկավ, նա լինում է խաղ սկսողը:

Խաղն սկսողը աչքերը փակում է ձեռքերով և սկսում բարձրաձայն հաշվել մինչև 15:

Մյուս խաղացողներն անմիջապես ցրվում են և աշխատում մինչև համբանքը վերջացնելը, թագնով:

Խաղն սկսողը յերբ համբելը վերջացնում է, աչքերը բացում է և կանչում. «Ապուրը յեփեց»:

Յեթե թագնավողները ձայն չեն հանում, նա զգուշ առաջ է շարժվում: Յերբ հաջողվում է մեկին տեսնել, անմիջապես

տալիս ե նրա անունը, յետ վազում նախ-  
կին տեղը և թքում ե գետնին:

Այս դեպքում խաղացողները դուրս են  
գալիս իրենց թագատոցից, հավաքվում  
նախկին տեղը և կրկին սկսում խաղը:

Այժմ խաղ սկսողը դառնում ե նա, վո-  
րին նախկին խաղ սկսողը տեսել ե:

Այն դեպքում, յերբ խաղ սկսողը փրն-  
տում ե թագնավողներին, խաղացողներին  
մեկն ու մեկը դուրս ե գալիս իր անկյու-  
նից ու վազում խաղն սկսելու տեղը և  
թքում գետնին ասելով. «Զա վսեխ», բո-  
լոր խաղացողներն սղատվում են:

Նրանք կրկին հավաքվում են, նորից  
շարունակում խաղը և նույն խաղ սկսողը  
մնում ե իր դերում:

Այս խաղը վարգացնում ե յերեխանե-  
րի աչալըջությունը, դիտելու և թշնամուց  
թագնավելու ունակությունները:

### 69. ԱՍՊԱՐԵՁ ԹՈՂ ԳԱՆ

Խաղացողներ՝ 10—30 հոգի:

Խաղավայր՝ դառ. հրապարակ:

Դաշտի յերկու ծայրերում քաշում են

մեկական հորիզոնական գիծ, վորպես խա-  
ղի սահման:

Խաղացողներին բաժանում են հավա-  
սար ողակների և նրանց հերթական հա-  
մարներ տալիս. որինակ. համար 1, 2, 3, 4  
և այլն:

Բոլոր խաղացողները կանգնում են մի  
գծի վրա, յերեսները դարձրած դեպի խա-  
ղադաշտի կենտրոնը:

Խաղն սկսողը կանգնում ե դաշտի կեն-  
տրոնում և կանչում. «Ասպարեզ թող գան  
համար 1, 2 կամ 1, 4 ողակները»:

Կանչված ողակներն անմիջապես վա-  
զում են դեպի հակառակ սահմանը, իսկ  
խաղ սկսողն աշխատում ե նրանց խփել:  
Ում վոր խփում ե, նրա ձեռքից շլթալ-  
վում ե և կանչում մյուս ողակներին:

Այս դեպքում խփել կարող են միայն  
շլթայի յերկու ծայրի խաղացողներն,  
իսկ շլթայի կենտրոնում ընկած խաղա-  
ցողները խփելու իրավունք չունեն, քանի  
վոր իրար են շլթայվել:

Այսպես խաղը շարունակվում ե մինչև  
վոր բոլոր խաղացողները բռնվեն շլթայի  
կողմից:

Վազելու ժամանակ շլթան կտրել և

անցնելը չի թույլատրվում: Կարելի չէ շղթայի տակից անցնել, կամ վրայից թռչելով անցնել, բայց արագությամբ գալ և շղթան կտրելով անցնելն արգելվում է:

Շղթա կազմողները վազողներին խիստ իրավունք չունեն, յերբ իրենց շղթան քանդված է, այդպիսի դեպքերում խիվածները ազատ են համարվում:

Յերբ բոլոր ողակները փախչում են մյուս սահմանը, խաղն սկսվում է հակառակ կողմից:

Այս խաղը զարգացնում է յերեխայի վազելու, խուսափելու և արագաշարժ լինելու ունակությունները:

ՎՐԻՊԱԿ

1. 29-րդ եջի ներքևից տողի յերեխաներն բառը կարդալ «յերեսներն»:
2. 63-րդ եջի վերևից 4-րդ տողը կարդալ այսպես. խաղացողներից 2 հոգի և այլն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՅԵՐԿՈՒ ԽՈՍԻ 5
2. ԽԱՂԵՐԻ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՄԱՍԻՆ 9

ԽԱՂԵՐ 5-ԻՑ—11 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐ

1. Ռեախնե փոքր գնդակի վարժություններ 15
2. Փխիկը և մկները 22
3. Ճուտիկներ 24
4. Վտանգավոր կամուրջներ 25
5. Հո՛փ, հո՛փ-հոփ 27
6. Գիշեր-ցերեկ 28
7. Վորսորդը և թռչունները 30
8. Պայլն ու վոչխարները 32
9. Արհեստավորներ 33
10. Վորսորդը ծովի վրա 35
11. Ծաղիկների առնը 36
12. Կատուն և մկները 41
13. Բարի լույս 42
14. Անտուն սկյուռը 43
15. Անբուն կկուն 45
16. Քիթ, մոմ 47

17. Թաշկինակ դցել	47
18. Վարի՞նը, թե վերինը	48
19. Տուննեւ	50
20. Աղամինի թոցները	51
21. Թել ու ասեղ	53

ԽԱՂԵՐ 6-ԻՑ 11 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐ

1. Բուլավաների ետաաֆեա	55
2. Անիվ	57
3. Համբեր	58
4. Գնդակ բռնողները	59
5. Նշանառու փնջիկ	61
6. Յերկաթուղի	63
7. Յերրորդն ավելորդ է	64
8. Ուրախ խաղ	66
9. Գանեւ իրը	67
10. Բրիզադավար	69
11. Կաթսան պալթեց	71
12. Գալիս եմ	72
13. Հողմացույց	74
14. Աջ հետապնդիր	75


ԽԱՂԵՐ 7-ԻՑ 11 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐ

1. Գեանախնձոր անկել	76
2. Արագավազ փնջիկը	78
3. Այո՛, վո՛չ	80

4. Տեսե՞լ ես իմ վոչխարը	81
5. Ոճն ու ճագարները	82
6. Սկյուռը և ընկույզը	83
7. Արագ նկարելը	85
8. Պատի խրո	87
9. Քարարձան	88
10. Հաղթողը	90
11. Լողունգներ	91
12. Թունալոր ոճ	94
13. Թակարդ	95
14. Ղեկավարի յեակից	96
15. Ողակը փախցրու	97
16. Քամին և ծաղիկները	98
17. Արջին հարվածելը	100

ԽԱՂԵՐ 9-ԻՑ 11 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐ

1. Կեզլի	102
2. Խուսափիր դնդակից	104
3. Հա՛Ք, հա՛Ք, միա՛ռու, միաո՛ւ	106
4. Ի՞նչ է պակասում	107
5. Լիճը խաղաղ է	109
6. Չինական ֆուտբոլ	111
7. Թակարդն ընկած աղվեսը	112
8. Ծիտը ծառին	113
9. Չալիկ-մալիկ	115
10. Ճամբար	117
11. Վոքսորդ	123
12. Շարքակուրիվ	125



13. Կույրեր	127
14. Վերջին գույգերը փախչեն	128
15. Հովիվն ու գայլը	129
16. Կարմիր արևը	131
17. Տապկնոցի	133
18. Ասպարեզ թող գան	134

БИБЛИОТЕКА  
 ИНСТИТУТА  
 ИСТОРИКО-ВЕДЕНИЯ  
 Академии Наук  
 СССР



գրք 1 ր.

807

36  
Cai



БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ՀՀ Ազգային գրադարան



NL0302926

9433